

**Հրաման N1408-Ն**

**06.դեկտեմբերի 2006թ**

**Պետական գրանցման թիվ 10007090**

*»Մարդու համար ախտաճնության 1-2-րդ խմբերի միկրոօրգանիզմների հետ աշխատանքի կազմակերպման կարգը« հաստատելու մասին*

Համաձայն »Մարդու համար ախտաճնության 1-4-րդ խմբերի միկրոօրգանիզմների ցանկը հաստատելու մասին« Հայաստանի Հանրապետության կառավարության 15 նոյեմբերի 2005թ. N 2121-Ն որոշման 2-րդ կետի ա) ենթակետի, ինչպես նաև մարդու համար ախտաճնության 1-2-րդ խմբերի միկրոօրգանիզմների հետ աշխատանքի կազմակերպման գործընթացի կանոնակարգման նպատակով՝

### Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

#### 1. Հաստատել

ա) »Մարդու համար ախտաճնության 1-2-րդ խմբերի միկրոօրգանիզմների հետ աշխատանքի կազմակերպման կարգը«:

Նախարար

Ն. Դավիդյան

# Կ Ա Ր Գ

## ԱՆՏԱԾՆՈՒԹՅԱՆ I-II ԽՄԲԵՐԻ ՄԻԿՐՈՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

### I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏ

1.1 Սույն կարգը սահմանում է պահանջներ կազմակերպչական, սանիտարահաճախամաճարակային (կանխարգելիչ) այն միջոցառումների նկատմամբ, որոնք ուղղված են անձնական և հասարակական անվտանգության ապահովմանը, շրջակա միջավայրի պաշտպանությանը I-II խմբերի ախտածին կենսաբանական ազդակների (այսուհետև՝ ԱԿԱ)՝ մարդու համար ախտածին միկրոօրգանիզմների (մանրէներ, վիրուսներ, քլամիդիաներ, ռիկեցիաներ, սնկեր), ներառյալ գենաինժեներային մոդիֆիկացիաների, կենսաբանական ծագման թայմների (տոքսինների) հետ աշխատելիս, ինչպես նաև թվարկված ազդակներով վարակվածության կասկածով ցանկացած օբյեկտի և նյութի հետ աշխատելիս (այդ թվում դաշտային, կլինիկական, մասնաձուլման (սնկցիոն)):

1.2 Սույն կարգը նախատեսված է իրավաբանական անձանց, անկախ կազմակերպիչական և սեփականության ձևից և անհատ ձեռնարկատերերի համար, որոնք ախտածնության I - II խմբերի միկրոօրգանիզմներով վարակված կամ կասկածելի վարակված օբյեկտների և նյութերի հետ իրականացնում են հետևյալ աշխատանքները.

- ախտորոշում (հարուցչի, նրա հակածնի կամ հակամարմնի հայտնաբերման, անջատման և տարբերակման նպատակով բիոտիկ և աբիոտիկ օբյեկտների հետազոտություններ)
- պոլիմերազային շղթայական ռեակցիայով (այսուհետև՝ ՊՇՌ) - ախտորոշում (նմուշների մշակման և պատրաստման փուլ)
- փորձարարական աշխատանքներ (միկրոօրգանիզմների, հելմինթների, տոքսինների և կենսաբանական ծագման թայմների օգտագործումով կատարվող ցանկացած աշխատանք)
- արտադրական աշխատանքներ (բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների արտադրություն՝ միկրոօրգանիզմների և նրանց մանրէաբանական սինթեզի արգասիքների օգտագործմամբ)
- կենդանաբանամակաբուժաբանական աշխատանքներ
- բնական օջախային վարակների տեսակետից էնդեմիկ (էնդոտիկ) տարածքներում դաշտային նյութի հավաքում և տեղափոխում

- վայրի ողնաշարավոր կենդանիների և հոդվածոտանիների խնամքի և պահման աշխատանքներ
- հատուկ վտանգավոր վարակներով հիվանդների տարահանման և հիվանդությունների օջախներում կատարվող աշխատանքներ
- հիվանդանոցներում (հոսպիտալներ), մեկուսարաններում և օբսերվատորներում կատարվող աշխատանքներ
- մարդկանց և կենդանիների դիակների հերձման ախտաբանաանատոմիական աշխատանքներ

## 2. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐՈՒՄ I-II ԽՄԲԵՐԻ ԱԽՏԱԾԻՆ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱԶԴԱԿՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՏԱՆՁՆԵՐ

### 2.1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԱՆՁՆԵՐ

2.1.1 Լաբորատորիաներում I-II խմբերի ախտածին կենսաբանական ազդակների հետ աշխատող անձիք անկախ, կազմակերպարավական և սեփականության ձևերից, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերը, ունենում են համապատասխան լիցենզիա: Իսկ I-II խմբերի ախտածին կենսաբանական ազդակների հետ աշխատանքներ իրականացնող լաբորատորիաներն ակրեդիտացվում են: I-II խմբերի ախտածին կենսաբանական ազդակների հետ աշխատող յուրաքանչյուր կառուցվածքային ստորաբաժանում պետք է ունենա նորմատիվ փաստաթղթերով կանոնակարգված սանիտարահամաճարակաբանական եզրակացություն՝ միկրոօրգանիզմների կոնկրետ տեսակների հետ որոշակի աշխատանքների իրականացման հնարավորության վերաբերյալ:

2.1.2. Ախտածին կենսաբանական ազդակների պահպանումը, հաշվառումը, փոխանակումը այլ կազմակերպությունների հետ և ոչնչացումը կատարվում են «Մարդու համար ախտածնության I-II խմբերի միկրոօրգանիզմների հաշվառման, պահպանման, հանձնման և տեղափոխման կարգի» համաձայն:

Չի թույլատրվում ախտածին կենսաբանական ազդակների փոխանցումն այն կազմակերպություններին, որոնք համապատասխան ախտածնության խմբի վարակիչ հիվանդությունների հարուցիչների օգտագործման հետ կապված գործունեության Առողջապահության նախարարության կողմից համապատասխան թույլատրություն չունեն:

Ախտածին կենսաբանական ազդակները պահվում են «վարակիչ» գոտում, որտեղ կատարվում են աշխատանքներ դրանց հետ: «Մաքուր» գոտում, որտեղ աշխատանքներ չեն կատարվում ախտածին կենսաբանական ազդակների հետ, թույլատրվում է

միկրոօրգանիզմների կուլտուրաների թանգարանային հավաքածուները պահել հատուկ առանձնացված և սարքավորված սենյակներում՝ ախտածնության I-II խմբերի ախտածին կենսաբանական ազդակների տեղափոխմանը ներկայացվող պահանջներին համապատասխան փաթեթավորումով:

Վարակագերծված նյութի փոխանցումը լաբորատորիաների միջև և նրա սահմաններից դուրս թույլատրվում է համապատասխան նորմատիվ փաստաթղթերով կանոնակարգված հատուկ մանրէագերծվածությունը ստուգելուց հետո:

2.1.3. Ախտածնության I խմբի վիրուսների և այն միկրոօրգանիզմների հետ, որոնց տաքսոնոմիական դիրքը և վտանգավորության աստիճանը որոշված չէ, բոլոր տեսակի աշխատանքները, ինչպես նաև օդակենսաբանական հետազոտություններն իրականացվում են առավելագույն մեկուսացված լաբորատորիաներում:

2.1.4. Աշխատանքը ԴՆԹ ռեկոմբինանտ մոլեկուլների հետ կանոնակարգվում է ռեկոմբինանտ մոլեկուլների հետ աշխատանքի անվտանգության նորմատիվ փաստաթղթերով և սույն կարգով:

2.1.5. Բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների արտադրության աշխատանքները կանոնակարգվում են սույն կարգով և այլ նորմատիվ փաստաթղթերով, որոնցում ներկայացված են պահանջներ արտադրական լաբորատորիաների շինությունների, սարքավորումների, անվտանգության տեխնիկայի և արտադրական սանիտարիայի վերաբերյալ:

2.1.6. Խոլերայի և բոտուլիզմի կանխարգելման նպատակով իրականացվող խոլերայի և բոտուլինային տոքսինի ախտորոշիչ հետազոտությունները, ինչպես նաև մարդկանց արյան մեջ ախտածնության II խմբի միկրոօրգանիզմների (առանց հարուցիչի կուտակման) հակածինների և/կամ նրանց նկատմամբ հակամարմինների հայտնաբերման իմունաբանական (շճաբանական) հետազոտությունները կարող են կատարվել ախտածնության III–IV խմբերի միկրոօրգանիզմների հետ աշխատանքներ իրականացնող լաբորատորիաներում՝ նրանց համար սահմանված կարգով:

Շճաբանական հետազոտության նյութը ենթակա է նախնական մշակման կարգի 2.8.16. կետի համապատասխան:

Վիրուսների ապակտիվացման կանոնակարգված մեթոդների բացակայության պատճառով ախտածնության II խմբի վիրուսների հակածինների հայտնաբերման և նրանց նկատմամբ հակամարմինների որոշման հետազոտությունները կատարվում են միայն բոքս-սենյակներում և կենսաբանական անվտանգության բոքսերում:

2.1.7. Ախտածնության I-II խմբերի ախտածին կենսաբանական ազդակների ՊՇՌ-ախտորոշումն իրականացվում է նորմատիվ փաստաթղթերի համաձայն այն կազմակերպություններում, որոնք իրենց գործունեությունը կազմակերպում են ախտածնության I-II խմբերի միկրոօրգանիզմների հետ՝ սահմանված կարգով:

վարակազերծված նյութի փոխանցումը կազմակերպության սահմաններից դուրս իրականացվում է սույն կարգի 2.1.2. կետի համաձայն:

Մարդկանց արյան հետազոտությունը բրուցելոզի, պարէնտերալ վիրուսային B և C հեպատիտների, ՄԻԱՎ/ ՁԻԱՀ- ի (առանց հարուցչի կուտակման) նկատմամբ թույլատրվում է իրականացնել այն լաբորատորիաներում, որոնք սահմանված կարգով ունեն ախտաճնության III խմբի հարուցիչների հետ աշխատանքների իրականացման համար սանիտարահամաճարակաբանական եզրակացություն: ՊՇՌ- մեթոդով աշխատելիս նմուշների վարակազերծումը կատարվում է ախտաճնության I-IV խմբերի մանրէներով վարակված նյութի վարակազերծման սահմանված կարգի համաձայն: Ախտաճնության II խմբի վիրուսների հետազոտումը կատարվում է բոքս-սենյակներում կամ կենսաբանական անվտանգության բոքսներում:

2.1.8. Արտադրական կամ փորձարարական աշխատանքներ իրականացնող յուրաքանչյուր կառուցվածքային ստորաբաժանման համար մշակվում է կոնկրետ պայմաններում ախտաճին կենսաբանական ազդակների հետ աշխատանքի անվտանգության ռեժիմի վերաբերյալ փաստաթուղթ՝ հաշվի առնելով աշխատանքի բնույթն ու տեխնոլոգիական առանձնահատկությունները: Ընդ որում, անվտանգության պահանջները չպետք է ցածր լինեն սույն կարգով սահմանված պահանջներից: Փաստաթուղթը համաձայնեցվում է կենսաբանական անվտանգության պահանջների պահպանման հսկողության հանձնախմբի հետ, որը ստեղծվում է կազմակերպությունում և հաստատվում նրա ղեկավարի կողմից:

Նոր մեթոդների և եղանակների մշակման և/կամ ներդրման ժամանակ, որոնց դեպքում անհրաժեշտ է անվտանգության միջոցների ուժեղացում, փաստաթղթում կատարվում են համապատասխան լրացումներ:

2.1.9 Ախտաճնության I-II խմբերի ախտաճին կենսաբանական ազդակների հետ աշխատանքի թույլատրվում են 18 տարեկանից բարձր, բժշկական, կենսաբանական, անասնաբուժական և այլ բարձրագույն ու միջին կրթություն ունեցող անձինք, ովքեր ավարտել են համապատասխան մասնագիտացման դասընթացներ, յուրացրել I –II խմբերի ախտաճին կենսաբանական ազդակների հետ աշխատանքի անվտանգության պահանջները, չունեն հակացուցումներ հատուկ պատրաստուկներով բուժման և անհատական պաշտպանության միջոցներով աշխատանքի համար:

2.1.10. Կառուցվածքային ստորաբաժանման ինժեներատեխնիկական անձնակազմը, ախտահանողները և սանիտարները, որոնք աշխատանքներ են կատարում I -II խմբերի ախտաճին կենսաբանական ազդակների հետ, կենսաբանական անվտանգության վերաբերյալ իրենց պաշտոնական պարտականությունների համապատասխան անցնում են հրահանգավորում աշխատանքի վայրում՝ սեմինար պարապմունքների միջոցով:

2.1.11. Կառուցվածքային ստորաբաժանման անձնակազմի, լաբորատորիաների (մասնաճյուղերի, բաժինների) սարքավորումները սպասարկող ինժեներատեխնիկական անձնակազմի I -II խմբերի ախտածին կենսաբանական ազդակների հետ աշխատանքի թույլտվությունն իրականացնում է ղեկավարի կողմից ստեղծված հանձնաժողովը (հրամանով) 2 տարին մեկ անգամ, իսկ անձնակազմի թույլտվությունը կենսաբանական աէրոզոլների հետ աշխատանքի համար՝ ամեն տարի, կենսաբանական անվտանգության գիտելիքների ստուգումից հետո:

2.1.12. Կազմակերպության ոչ մշտական աշխատող ինժեներատեխնիկական անձնակազմի այցը լաբորատորիա թույլատրվում է կազմակերպության ղեկավարի կողմից: Այցը կատարվում է աշխատանքն ընդհատելուց և ընթացիկ ախտահանումը կատարելուց հետո, կառուցվածքային ստորաբաժանման աշխատակցի ուղեկցությամբ և գրանցվում է մատյանում:

2.1.13. Կազմակերպությունում մշտական աշխատող մասնագետները (բժիշկներ, կենսաբաններ, անասնաբույժներ և այլն) թույլատրվում են ախտածին կենսաբանական ազդակների հետ աշխատանքի ընդհանուր հիմունքներով (կետ 2.1.9., 2.1.11), իսկ մասնագետները, որոնք մշտապես չեն աշխատում կազմակերպություններում թույլատրվում են մտնել տարածքներ, որտեղ կատարվում են աշխատանքներ ախտածնության I-II խմբերի ախտածին կենսաբանական ազդակների հետ, կազմակերպության ղեկավարի գրավոր թույլտվությամբ: Այցի նպատակը և տևողությունը գրանցվում է համապատասխան մատյանում:

2.1.14. Լաբորատորիայի (կազմակերպության) յուրաքանչյուր աշխատակից և գործուղված անձ պարտավոր է ստորաբաժանման ղեկավարին հայտնել կենսաբանական անվտանգության հայտնաբերված խախտումների մասին:

2.1.15. Աշխատանքի շտապ իրականացման անհրաժեշտությունը, անբավարար նյութատեխնիկական ապահովվածությունը և այլ պատճառները չեն կարող հիմք լինել սույն կարգի պահանջներից շեղվելու համար:

2.1.16. Կազմակերպությունում կենսաբանական անվտանգության միջոցառումների կազմակերպումը իրականացնում է նրա ղեկավարը, իսկ ստորաբաժանումներում՝ վարիչները:

2.1.17. Կազմակերպության տարածքը և շինությունները ենթակա են շուրջօրյա պաշտպանության: Տարածքը պետք է լինի պարսպապատ՝ օտար անձանց անվերահսկելի ներթափանցումը կանխելու համար:

## 2.2 ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆԸ

### ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

2.2.1. Այստաժնության I-II խմբերի այստաժին կենսաբանական ազդակների հետ կապված աշխատանքի ընդունման ժամանակ անձնակազմն անցնում է նախնական բժշկական զննում հակացուցումների բացահայտման նպատակով՝ հաշվի առնելով իմունական խարզելումը, հատուկ պատրաստուկներով բուժումը և անհատական պաշտպանության միջոցների օգտագործումը: Բժշկական զննման ծավալը և կարգը սահմանվում նորմատիվ փաստաթղթերով:

2.2.2. Այստաժին կենսաբանական ազդակների հետ աշխատող բոլոր աշխատակիցներն ենթակա են դիսպանսեր հսկողության: Պարբերական բժշկական զննումները կատարվում է համապատասխան նորմատիվ փաստաթղթերի համաձայն:

Խորը միկոզների հարուցիչների հետ աշխատող անձանց նկատմամբ իրականացվում են ալերգիկ փորձեր:

2.2.3. Այստաժին կենսաբանական ազդակների հետ աշխատող և արտադրական գործունեության բնույթով «վարակիչ» գոտու սենյակներ այցելող աշխատակիցները ենթակա են պատվաստման: Անընկալության (իմունիտետի) մակարդակը գնահատվում է ստանդարտ մեթոդներից որևէ մեկով՝ պատվաստումից (կրկնապատվաստումից) առաջ և հետո:

2.2.4. Իմունական խարզելման հակացուցումներ ունեցող անձիք, բուժման արդյունավետ միջոցների առկայության դեպքում, աշխատանքի թույլատրվում են առանձին հրամանով, համաձայն վերջիններիս գրավոր դիմումի:

Աերոգոլային լաբորատորիաներում և կու տենդի հարուցիչով վարակված կամ կասկածելի վարակված նյութերի, ինչպես նաև բուժման հատուկ մեթոդներ չունեցող այստաժին կենսաբանական ազդակների հետ, նշված աշխատակիցներն աշխատանքի չեն թույլատրվում:

2.2.5. Առավելագույն մեկուսացված լաբորատորիաներում իմունային համակարգի խանգարումներ ունեցող անձանց աշխատանքի չեն թույլատրում:

2.2.6. Բոլոր աշխատակիցները, որոնք աշխատում են այստաժին կենսաբանական ազդակների հետ կամ արտադրական գործունեության բնույթով այցելում են «վարակիչ» գոտու սենյակներ, որտեղ աշխատանքներ են կատարում I-II խմբերի այստաժին կենսաբանական ազդակների (բացի խոլերայից և կենսաբանական ծագման թույներից) հետ, ենթարկվում են ամենօրյա ջերմաչափման, որի արդյունքները գրանցվում են մատյանում և վավերացվում պատասխանատու բժշկի (գիտաշխատողի) կողմից:

Խոլերայի հարուցիչ հետ աշխատող անձիք ստամոքս - աղիքային ուղու խանգարումների դեպքում պարտադիր հետազոտվում են վիրբիոնակրության վերաբերյալ:

Այստաձնության I խմբի վիրուսների հետ աշխատող անձիք ենթարկվում են ամենօրյա բժշկական զննման՝ աշխատանքը (հերթափոխը) սկսելուց առաջ:

2.2.7. Աշխատակցի մոտ ախտաձնության I-II խմբերի հարուցիչներով հարուցված հիվանդության առաջացման դեպքում հակահամաճարակային, ախտորոշիչ և բուժկանխարգելիչ միջոցառումները կատարվում են կազմակերպության օպերատիվ կամ հատուկ վտանգավոր վարակների տեղայնացման և վերացման միջոցառումների տարածքային համալիր ծրագրի համաձայն:

2.2.8. Աշխատակցի մոտ այն վարակիչ հիվանդության ախտանշանների, որի հարուցիչ հետ նա աշխատել է, առաջացման դեպքում, նա պարտավոր է այդ մասին տեղյակ պահել ստորաբաժանման ղեկավարին կամ կազմակերպության հերթապահին: Առավելագույն մեկուսացված լաբորատորիաների անձնակազմը ցանկացած զանգատի դեպքում տեղյակ է պահում ղեկավարությանը: Տեսագա որոշումն ընդունվում է կազմակերպության ղեկավարի կողմից:

2.2.9. Այստաձին կենսաբանական ազդակների հետ աշխատող աշխատակցի հիվանդանալու դեպքում, հիվանդի տուն է ուղարկվում կազմակերպության բժիշկը՝ համաճարակաբանական անամնեզի ճշտման և նրա մեկուսացման անհրաժեշտության հարցը որոշելու համար: Այցելության արդյունքները գրանցվում են մատյանում և տեղեկացվում կազմակերպության ղեկավարին:

2.2.10. Ընդհանուր բուժցանցի բժշկի կանչը թույլատրվում է միայն կազմակերպության բժշկի այցից հետո, բացառությամբ կենսական ցուցումներով կանչների: Այդ դեպքում հիվանդը կամ նրա բարեկամները պետք է եկող բժշկին տեղեկացնեն հիվանդի կողմից կատարվող աշխատանքի բնույթի մասին և հայտնեն կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարին:

2.2.11. Եթե որևէ պատճառով աշխատակիցները չեն կարող աշխատանքի հաճախել, 2 ժամվա ընթացքում պետք է տեղեկացնել ստորաբաժանման վարիչին: Աշխատանքի սկզբից 2 ժամվա ընթացքում աշխատակցի չներկայանալու և նրա գտնվելու վայրի մասին տեղեկությունների բացակայության դեպքում, ստորաբաժանման ղեկավարը միջոցներ է ձեռնարկում նրա գտնվելու վայրը և բացակայության պատճառները պարզելու համար:

2.2.12. Ժանտախտի, խլնախտի, մելիոիդոզի, խորը միկոզների և այստաձնության I խմբի վիրուսների հետ աշխատող մասնագիտացված կազմակերպությունում պետք է լինի առանձին շինությունում տեղակայված մեկուսարան (ինֆեկցիոն ստացիոնար)՝ հակահամաճարակային ռեժիմը խստորեն ապահովելու համար անհրաժեշտ պայմաններով:

Ստացիոնարում մեկուսացվում են նշված հարուցիչներով հարուցված հիվանդություններին բնորոշ ախտանշաններ ունեցող, ինչպես նաև այստաձին

կենսաբանական ազդակների հետ աշխատանքի ժամանակ վթար թույլ տվող և վթարի գոտում գտնվող աշխատակիցները:

2.2.13. Աշխատակիցների մեկուսացման և հատուկ բուժման իրականացման մասին որոշումն ընդունում է կազմակերպության ղեկավարը:

2.2.14. Մեկուսարանը (ինֆեկցիոն ստացիոնար) սպասարկող բժիշկները պետք է կլինիկական վերապատրաստում անցնեն հատուկ վտանգավոր վարակների վերաբերյալ: Մեկուսարանի անձնակազմն աշխատանքի է թույլատրվում սույն կարգի 2.1.9, 2.1.11. և 2.2.4. կետերի համաձայն: Անհրաժեշտության դեպքում մեկուսարանի սպասարկման գործընթացում կարող են ներգրավվել կազմակերպության բժիշկները, լաբորանտները, ախտահանողները և սանիտարները, որոնք ունեն ախտածին կենսաբանական ազդակների հետ աշխատանքի թույլտվություն :

2.2.15. Խորհրդատվության համար կարող են ներգրավվել ախտածնության I-II խմբերի հարուցիչների հետ աշխատանքի թույլտվություն չունեցող փորձառու վարակաբաններ և այլ մասնագետներ, եթե նրանք նախօրոք հրահանգավորվել են աշխատանքի անվտանգության հարցերի վերաբերյալ: Հիվանդներին այցելելու ժամանակ կազմակերպության մեկուսարանի բժիշկն ուղեկցում է նրանց: Խորհրդատուների նկատմամբ սահմանվում է բժշկական հսկողություն (առանց մեկուսացման) տվյալ հիվանդության գաղտնի շրջանի տևողությամբ:

2.2.16. Մեկուսարանում պետք է լինի հիմնական և պահուստային հատուկ դեղամիջոցների և կենսական ցուցումներով օգնություն ցույց տալու դեղամիջոցների (սրտային, հակաշոկային և այլ պատրաստուկներ) պաշար:

2.2.17. Ախտածին կենսաբանական ազդակների հետ աշխատանքի ժամանակ առաջացած վթարների կամ լաբորատոր վարակման արդյունքում աշխատակիցների հիվանդության բոլոր դեպքերի մասին կազմակերպության ղեկավարը պարտավոր է անհապաղ տեղեկացնել ՀՀ ԱՆ և ՀՀ ԱՆ պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչություն:

2.2.18. Ախտածին կենսաբանական ազդակների հետ աշխատանքի ժամանակ թույլ տրված վթարների բոլոր դեպքերի մասին, որոնք տուժածի նկատմամբ կանխարգելիչ բուժում են պահանջում, անհրաժեշտ է տեղեկացնել ՀՀ ԱՆ և ՀՀ ԱՆ պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչություն:

### 2.3. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՁՆԵՐ

2.3.1. Ախտածին կենսաբանական ազդակների հետ աշխատանքներ իրականացնող լաբորատորիաները պետք է տեղակայված լինեն առանձին շենքում կամ շենքի մեկուսացված հատվածում:

Լաբորատորիայի մուտքի դռները պետք է կողավեն, դռան վրա նշված լինի լաբորատորիայի անվանումը (համարը) և «Կենսաբանական վտանգ» միջազգային նշանը:

2.3.2. Նոր լաբորատորիաների կառուցման և գործող լաբորատորիաների (ստորաբաժանումների) վերակառուցման նախագծերը համաձայնեցվում են ՀՀ ԱՆ ՊՀՀ տեսչության հետ՝ հավելյալ կենտրոնի կողմից տրվող սահմանափակումներով և անհրաժեշտ դեպքերում՝ Երևանի մարզպետարանի կողմից:

2.3.3. Լաբորատորիան պետք է ապահովված լինի մշտական հոսող ջրով, կոյուղու համակարգով, էլեկտրական հոսանքով, ջնառուցման, օդափոխության համակարգերով և կապի ժամանակակից միջոցներով:

2.3.4. Լաբորատորիայի բոլոր շինությունները պետք է ապահովված լինեն բնական և/կամ արհեստական լուսավորությամբ, որը պետք է ապահովի աշխատանքի տեսակից կախված նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան լուսավորության մակարդակ:

2.3.5. Լաբորատորիայի շենքը բաժանվում է երկու մասի՝ «վարակիչ» գոտի, որտեղ աշխատանքներ են իրականացնում ախտածին կենսաբանական ազդակների հետ և իրականացվում է դրանց պահպանում և «մաքուր» գոտի, որտեղ ախտածին կենսաբանական ազդակների հետ աշխատանքներ չեն իրականացվում և չեն պահպանվում:

Նախագծային որոշումները և սարքավորումների տեղակայումը պետք է ապահովեն ախտածին կենսաբանական ազդակների շարժի հոսքայնությունը և սույն կարգի կատարումը:

2.3.6. Լաբորատորիայի «մաքուր» գոտում տեղակայվում են.

- հանդերձարան՝ վերին հագուստի համար,
- սենյակ՝ նախապատրաստական աշխատանքների համար (պատրաստուկների, սննդամիջավայրի պատրաստման, լցման, լվացման և այլն),
- սենյակ՝ սննդային միջավայրերի և լաբորատոր ամանեղենի մանրէազերծման համար,
- սառնարանային խցիկի և սառնարանների սենյակ՝ սննդային միջավայրերի և ախտորոշիչ պատրաստուկների պահպանման համար,
- սենյակ՝ փաստաթղթերի և գրականության հետ աշխատանքի համար,

- հանգստի սենյակ,
- դեկավարի աշխատասենյակ,
- օժանդակ սենյակներ,
- գուգարան:

»Վարակիչ« գոտում տեղակայվում են.

- վարակված կենդանիների հետ աշխատանքների կառուցահատված, որը կազմված է ստացվող նյութերի ընդունման, տեսակավորման և առաջնային մշակման սենյակից, այդ նյութի հետ աշխատանքի համար նախատեսված սենյակից (վարակում, հերձում, ցանքս), վարակված կենդանիների պահպանման սենյակից, գույքի (վանդակներ, ցանցեր և այլն) վարակազերծման սենյակից: Վարակված կենդանիների հետ աշխատանքի կառուցահատվածը պետք է առանձնացված լինի »վարակիչ« գոտում մնացած մասից՝ պաշտպանական հագուստը հագնելու և հանելու սենյակներով:

- բոքս-սենյակներ՝ մանրէաբանական հետազոտությունների համար,
- սենյակներ սարքավորված կենսաբանական անվտանգության բոքսերով՝ մանրէաբանական հետազոտությունների իրականացման համար,
- սենյակներ՝ շճաբանական հետազոտությունների համար,
- սենյակ՝ լյումինիսցենտային մանրադիտակային զննման համար,
- սենյակ՝ կենդանամակաբուծաբանական աշխատանքների համար,
- սենյակներ՝ ՊՇՌ- ախտորոշման համար,
- ավտոկլավի սենյակ՝ նյութի վարակազերծման համար,
- թերմոստատի սենյակ,
- սենյակ՝ աշխատանքային մատյաններում գրանցումների համար,
- գուգարան:

2.3.7.»Վարակիչ« և »մաքուր« գոտիների սահմանում տեղակայվում է սանթոդարան:

2.3.8. Սենյակների քանակը և դրանց հազվեցվածությունը սարքավորումներով կախված է յուրաքանչյուր լաբորատորիայի կոնկրետ նպատակներից և խնդիրներից (հետազոտությունների անվանացուցակ և ծավալ, կատարվող աշխատանքի բնույթ, վարակված կենդանիների կենտրոնացված լաբորատորիայի, ավտոկլավի, լվացման սենյակների առկայություն և այլն):

2.3.9. »Վարակիչ« գոտու այն սենյակներում, որտեղ ախտածին կենսաբանական ազդակների հետ աշխատանքներ չեն կատարվում, անձնակազմն աշխատում է աշխատանքային հագուստով: Այն սենյակներում, որտեղ աշխատում են ախտածին կենսաբանական ազդակների հետ, լրացուցիչ հագնում են պաշտպանական հագուստ: Պաշտպանական հագուստի տեսակը կախված է կատարվող աշխատանքի բնույթից:

Պաշտպանական հագուստը հագնում են նախաբոքում կամ մանրէաբանական սենյակ մտնելուց առաջ, հանում՝ նախաբոքում կամ մանրէաբանական սենյակի ելքում:

2.3.10. Ծիսությունների ներքին հարդարումը կատարվում է նրանց ֆունկցիոնալ նշանակությանը համապատասխան: »Վարակիչ« գոտու լաբորատոր սենյակներում հատակի, պատերի, առաստաղի մակերեսները պետք է լինեն հարթ, չունենան ճեղքեր, լինեն կայուն լվացող և ախտահանիչ միջոցների նկատմամբ, հատակը չպետք է լինի դյուրասահ:

2.3.11. »Վարակիչ« գոտու սենյակներում ջնջուցման մարտկոցները և խողովակաշարերը տեղակայվում են պատերից որոշակի հեռավորության վրա՝ նրանց վարակազերծումն ապահովելու նպատակով:

2.3.12. »Վարակիչ« գոտու սենյակներում, որտեղ աշխատում են ախտածին կենսաբանական ազդակների հետ, չի թույլատրվում ջրամամատակարարման այնպիսի համակարգի տեղադրում, որը տեխնիկական միջոցներով պաշտպանված չէ ներծծումից և հետադարձ հոսքից:

2.3.13. Արգելվում է չվարակազերծված հեղուկները »վարակիչ« գոտու սենյակներից լցնել կոյուղու ցանցի մեջ:

2.3.14. »Վարակիչ« գոտու դռները և պատուհանները պետք է ամուր փակվող լինեն: Թույլատրվում է լուսախորշերը փակել ապակյա բլոկներով: Յոկոլային և առաջին հարկերի պատուհաններին տեղադրվում են մետաղական ցանցեր, որոնք չեն լսախտում հակահրդեհային անվտանգության կանոնները: Պահակային ազդանշանիչների առկայությունը չի բացառում մետաղական ցանցերի անհրաժեշտությունը: Դռները պետք է կողպող հարմարանքներ ունենան:

2.3.15. Վարակված կենդանիների հետ աշխատանքի կառուցահատվածում պետք է լինեն բարձր (30սմ.) շեմեր՝ կրծողների ներթափանցումը կանխելու համար:

2.3.16. Վարակված կենդանիների հետ աշխատանքների սենյակը, բոքս-սենյակները, մանրէաբանական սենյակները պետք է ունենան ներհոս-արտահոս օդափոխության ինքնավար համակարգ, որը մեկուսացված լինի շենքի օդափոխության այլ համակարգերից և ելքի մասում սարքավորված լինի պաշտպանական արդյունավետության նկատմամբ ստուգված նուրբ մաքրման ֆիլտրերով (ՆՄՖ):

2.3.17. Լաբորատորիայի ներհոս-արտածիզ օդափոխության համակարգերի շահագործումն իրականացվում է կազմակերպության հրահանգի համաձայն՝ կազմված նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

2.3.18. Կենսաբանական անվտանգության բոքսերի պաշտպանական արդյունավետությունը ստուգում են հետևյալ դեպքերում.

- մոնտաժից և օգտագործման նախապատրաստումից հետո,

- տարին մեկ անգամից ոչ պակաս՝ խոշոր դիսպերսային մասնիկներից օդի նախնական մաքրման ֆիլտրների առկայության դեպքում,
- վեց ամիսը մեկ անգամից ոչ պակաս՝ բոքսի օդափոխիչ համակարգում նշված ֆիլտրների բացակայության դեպքում,
- բոքսը տեղափոխելուց կամ վերանորոգելուց հետո:

2.3.19. Նախաբոքսերում (անցախուց), ինչպես նաև պաշտպանական հագուստները հանելու սենյակում, տեղադրվում են լվացարաններ և ախտահանիչ լուծույթներով տարողություններ՝ նախատեսված վթարային դեպքերի համար: Հատակին փռում են ախտահանիչ լուծույթով թրջված գորգ:

2.3.20. Վթարային ձայնային և/կամ լուսային ազդանշանիչը տեղադրվում է «վարակիչ» կամ «մաքուր» գոտու այն սենյակներում, որտեղ մշտապես գտնվում է անձնակազմը:

2.3.21. Պաշտպանական հագուստը հագնելու սենյակում տեղադրվում է հայելի:

2.3.22. Լաբորատոր սարքավորումները և կահույքը (սեղաններ, կենդանիների պահպանման համար նախատեսված դարակաշարեր, աթոռներ և այլն) պետք է հարթ լինեն, առանց սուր ծայրերի, լվացող ու ախտահանիչ միջոցների ազդեցության նկատմամբ և ունենան կայուն մակերեսներ: Սեղանների մակերեսը կարեր և ճեղքեր չպետք է ունենան:

2.3.23. Անցումների լայնությունը դեպի աշխատատեղեր կամ սարքավորումների 2 շարքերի միջև եղած հեռավորությունը պետք է լինի 1.5մ-ից ոչ պակաս

2.3.24. Ծինություններում, որտեղ աշխատանքներ են կատարվում ախտածին կենսաբանական ազդակների հետ, օդի և մակերեսների վարակազերծման համար տեղադրում են մանրէասպան լամպեր՝ նորմատիվ փաստաթղթերին համապատասխան:

2.3.25. Աշխատանքային սեղաններն արևի ուղիղ լույսից պաշտպանելու համար օգտագործում են արևապաշտպան թաղանթեր, ախտահանիչ միջոցների ազդեցության նկատմամբ կայուն նյութից պատրաստված շերտավարագույրներ:

2.3.26. Լաբորատոր սենյակները պետք է անթափանց լինեն կրծողների և միջատների համար:

2.3.27. Լաբորատորիայում պետք է լինի հակահրդեհային ազդանշանիչ և հրդեհը հանգցնելու միջոցներ:

2.4 ԱՆՏԱԾԻՆՈՒԹՅԱՆ I (ԲԱՅԻ ՎԻՐՈՒՄՆԵՐԻՑ) ԵՎ II ԽՄԲԵՐԻ ԱՆՏԱԾԻՆ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱԶԴԱԿՆԵՐԻ ՀԵՏ ԱՆՏՈՐՈՇԻՉ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԼՐԱՅՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՁՆԵՐ

2.4.1. Ախտորոշիչ հետազոտություններ կատարող լաբորատորիաները պետք է ունենան երկու մուտք՝ աշխատակիցների և նյութի ստացման համար: Թույլատրվում է նաև նյութի ստացումը փոխանցման պատուհանից:

2.4.2. Սանթոդարանում առանձնացվում են աշխատանքային հագուստ հագնելու սենյակներ՝ սարքավորված անձնական և աշխատանքային հագուստի զգնատապահարաններով և ջրցողարանով:

2.4.3. Շինությունում ներհոս-արտահոս օդափոխության կամ արտահոս օդափոխության ելքում նուրբ մաքրման ֆիլտրերի բացակայության դեպքում, վարակված կենդանիների հետ աշխատանքի կառուցահատվածում պետք է օգտագործվեն II (A, B) կարգի կենսաբանական անվտանգության բոքսեր, իսկ ժանտախտի հետազոտությունների ժամանակ՝ II B կարգի կամ III կարգի:

2.4.4. Ախտածնության II խմբի վիրուսների և ռիկետսիաների անջատման հետ կապված ախտորոշիչ աշխատանքները կատարվում են բոքս-սենյակներում կամ II B կարգի կենսաբանական անվտանգության բոքսերում:

2.4.5. Տաք կլիմայի պայմաններում թույլատրվում է աշխատանքային սենյակներում և բոքսերում օդատրակիչների տեղադրումը՝ ախտածին կենսաբանական ազդակների հետ աշխատանքի ընթացքում դրանք անջատելու պայմանով: Չի թույլատրվում օդատրակիչների տեղադրումը վարակված կենդանիների պահման սենյակներում:

2.5 I (ԲԱՅԻ ՎԻՐՈՒՄՆԵՐԻՑ) ԵՎ II ԽՄԲԵՐԻ ԱՆՏԱԾԻՆ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱԶԴԱԿՆԵՐԻ ՀԵՏ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԼՐԱՅՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՁՆԵՐ

2.5.1. Միայն փորձարարական հետազոտություններ իրականացնող լաբորատորիաներում թույլատրվում է մեկ մուտք, իսկ լաբորատոր կենդանիների վրա փորձարարական աշխատանքների իրականացման դեպքում պարտադիր է 2 մուտքի առկայությունը:

2.5.2. Սանթոդարանում առանձնացվում են անձնական և աշխատանքային հագուստների համար սենյակներ՝ անհատական պահարաններով, ինչպես նաև ջրցողարան, որը տեղակայվում է այդ երկու սենյակների արանքում: Գոտիների սահմանը անցնում է ջրցողարանի տարածքով:

2.5.3. Աշխատակիցները, սանթղարանով «մաքուր» գոտուց «վարակիչ» գոտի անցնելիս, թողնում են իրենց անձնական հագուստներն անհատական պահարաններում, փոխում կոշիկները, հագնում ջրցողարանի համար նախատեսված հողաթափերը և անցնում աշխատանքային հագուստը և կոշիկները հագնելու սենյակ: »Վարակիչ« գոտուց դուրս գալիս, ջրացնուղ ընդունելու կարգը կախված է հարուցչի տեսակից, աշխատանքի բնույթից և կանոնակարգվում է կազմակերպության ղեկավարի կողմից հաստատված ներքին կարգապահության կանոններով:

Սանթղարանով թույլատրվում է տանել միայն բանալիներ և կնիքներ:

2.5.4. Կազմակերպության միևնույն տարածքում մի քանի լաբորատորիաների առկայության դեպքում թույլատրվում է ունենալ կենտրոնացված ավտոկլավային և մանրէազերծման սենյակներ:

2.5.5. Միևնույն կառուցահատվածում պրոֆիլային մի քանի լաբորատորիաների տեղակայման դեպքում նրանց համար ընդհանուր կարող են լինել՝ վարակված կենդանիների հետ աշխատանքների կառուցահատվածը, սանթղարանը, վարակազերծման ավտոկլավային սենյակը, լվացարանը, սննդային միջավայրերի պատրաստման և այլ սենյակներ:

2.5.6. Գիտահետազոտական կազմակերպություններում, որոնք ունեն մի քանի լաբորատորիաներ սպասարկող միասնական սանթղարաններ, կենտրոնացված ավտոկլավային և այլ սենյակներ, թույլատրվում է »վարակիչ« գոտում տեղակայել օժանդակ սենյակներ, որոնցում ախտածնության I–II խմբերի ախտածին կենսաբանական ազդակների օգտագործման կամ պահպանման աշխատանքներ չեն կատարվում: Սենյակների քանակը որոշվում է ստորաբաժանման ֆունկցիոնալ խնդիրներով: Կենսաբանական անվտանգության ռեժիմի ապահովումը »վարակիչ« գոտու նշված սենյակներում որոշվում է իրական կենսաբանական վտանգին համապատասխան կազմակերպության ղեկավարի կողմից հաստատված փաստաթղթով՝ տվյալ կազմակերպության կենսաբանական անվտանգության պահանջների պահպանման հսկողության հանձնախմբի հետ համաձայնեցնելուց հետո:

2.5.7. Թույլատրվում է օդի որակավորում »վարակիչ« գոտու սենյակներում: Օդաորակիչները տեղակայվում են ներհոս օդափոխիչ համակարգերի վրա՝ մինչև նուրբ մաքրման ֆիլտրերը: Այս գոտու սենյակներում չի թույլատրվում պատուհանային օդաորակիչների տեղադրում:

2.5.8. Աերոզոլների առաջացման բարձր վտանգի հետ կապված աշխատանքները (ցենտրիֆուգում, հոմոգենացում, ուլտրաձայնով մշակում, ինտենսիվ թափահարում, բարձր կոնցենտրացիաներ և մեծ ծավալներ և այլն) կատարվում են առանձնացված բոքս-սենյակներում կամ կենսաբանական անվտանգության III կարգի բոքսերում: Բոքսերում տեղադրում են անհրաժեշտ սարքավորումներ: Կենսաբանական անվտանգության

բոքսերը կարող են միացվել՝ կազմելով տեխնիկական գծեր: Կոմունիկացիաների մուտքի և բոքսերի միմյանց հետ միացման տեղերը հերմետիկացվում են:

## 2.6. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻՆ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ԼՐԱՅՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՁՆԵՐ

2.6.1. Աշխատանքի կարգն արտադրական շինություններում ախտածնության I–II խմբերի միկրոօրգանիզմների կուլտուրաների հետ աշխատանքի ժամանակ որոշվում է մանրէային և վիրուսային պատրաստուկների արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների համար աշխատանքի անվտանգության, արտադրական սանիտարիայի կանոնների և սանիտարահակահամաճարակային ռեժիմի, սույն կարգի, բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների արտադրության և հսկողության վերաբերյալ սանիտարական կանոնների, ինչպես նաև ախտածնության I - IV խմբերի վարակիչ հիվանդությունների հարուցիչների լիոֆիլային չորացման հրահանգի համապատասխան:

2.6.2. Բոլոր վակումային գծերը, խտացված օդի և գազի գծերը »վարակիչ« գոտում ապառվվում են օդի նուրբ մաքրման ֆիլտրերով:

## 2.7 ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԵԿՈՒՍԱՅՎԱԾ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ԼՐԱՅՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՁՆԵՐ

2.7.1. Առավելագույն մեկուսացված լաբորատորիաների (կենսաբանական անվտանգության առավելագույն մակարդակի լաբորատորիաներ, որոնք նախատեսված են լաբորատորիաների անձնակազմի և բնակչության համար բարձր վտանգ ներկայացնող ախտածին կենսաբանական ազդակների հետ ախտորոշիչ, փորձարարական և արտադրական աշխատանքներ իրականացնելու համար) կառուցման և վերակառուցման նախագծերը համաձայնեցվում են ՀՀ ԱՆ ՊՀՏ տեսչության հետ:

2.7.2. »վարակիչ« և »մաքուր« գոտիների սահմանում սարքավորվում են սանթոդարաններ, որոնք բաղկացած են հերմետիկ դռներով (առանձին մուտքի և ելքի համար) օդային տամբուր-անցալսցերից և սանիտարակենցաղային սենյակներից (որտեղ կատարվում է անձնակազմի լրիվ վերազգեստավորում, աշխատանքային և հատուկ հագուստների, անհատական պաշտպանության միջոցների փոխում, դրանց վարակազերծում, սկզբնական վիճակի բերում և պահպանում), ջրցողարան և մազերի չորացման սենյակ:

2.7.3. »վարակիչ« գոտու սենյակները պետք է ունենան նուրբ մաքրման ֆիլտրերով մեխանիկական օդափոխության ներհու-արտաձիգ համակարգ, որը պետք է ապահովի.

- սենյակներում օդի նոսրացումը՝ նրա պարամետրերի մշտական ավտոմատ կարգավորմամբ և գրանցմամբ,
- օդի ողորդված հոսքերի ստեղծումը, որը կարգավորվում է անձնակազմի կողմից,
- ներհոսող և արտահոս օդի մաքրումը՝ նուրբ մաքրման ֆիլտրերով,
- սենյակներում սանիտարահիգիենիկ պահանջվող պայմանների պահպանումը:

2.7.4. «Վարակիչ» գոտում չի թույլատրվում ջրամատակարարման համակարգի տեղադրումը, որը տեխնիկական միջոցներով պաշտպանված չէ ներծծումից և հետադարձ հոսքից:

2.7.5. «Վարակիչ» գոտուց փոխանցվող մնացորդների և առարկաների վարակազերծման համար գոտիների սահմանում տեղակայվում են անցաթողման ավտոկլավներ 2 դռներով՝ դրանց միաժամանակյա բացմանը խոչընդոտող պաշարիչ համակարգով:

2.7.6. Բարձր ջերմաստիճանի ազդեցության նկատմամբ անկայուն առարկաների, սարքավորումների, պաշտպանական հագուստի և այլնի փոխանցման համար գոտիների սահմանում տեղակայվում են գոլորշաֆորմալինային խցիկներ, փոխանցման անցախցեր՝ ախտահանիչ միջոցների փոշեցրման սարքերով: Նշված փոխանցման սարքերը սարքավորվում են դռների պաշարման համակարգով:

2.7.7. Աշխատանքի ընթացքում առաջացած բոլոր հեղուկ մնացորդները ենթակա են պարտադիր քիմիական և ջերմային վարակազերծման: Անձնակազմի հիգիենիկ ջրցողման առիտ ջրերը ենթակա են պարտադիր ջերմային վարակազերծման:

2.7.8. Բոլոր տնասկի աշխատանքները կատարվում են կենսաբանական անվտանգության III կարգի բոքսերում կամ պնևմոկոստյումներով: Անհրաժեշտության դեպքում բոքսերից ստեղծվում են տեխնոլոգիական գծեր:

2.7.9. Լաբորատորիաները սարքավորվում են պնևմոկոստյումների օդամատակարարման կենտրոնացված համակարգով:

2.7.10. «Վարակիչ» գոտի յուրաքանչյուր այցից հետո պնևմոկոստյումները ենթարկվում են ախտահանման, ստուգվում է դրանց ամբողջականությունը և ֆիլտրերի պաշտպանական արդյունավետությունը:

2.7.11. Լաբորատորիայի անձնակազմը հատուկ պատրաստում է անցնում պնևմոկոստյումների օգտագործման վերաբերյալ:

2.7.12. Լաբորատորիաները սարքավորվում են էլեկտրամատակարարման կրկնակի համակարգով, սնուցման ինքնավար (պահեստային, վթարային) աղբյուրով (դիզել-գեներատոր):

2.7.13. Օդափոխության ներհոս-արտաձիգ համակարգը, պնևմոկոստյումների օդամատակարարման համակարգը, առիտ ջրերի հավաքման և մշակման և այլ համակարգերը, բացի աշխատանքային ազդեցատներից, պետք է համալրված լինեն լրացուցիչ, պահեստային ազդեցատներով:

2.7.14. Այստաժին կենսաբանական ազդակների հետ աշխատանքը թույլատրվում է միայն ինժեներա-տեխնիկական բոլոր համակարգերի կենսաբանական անվտանգության ապահովման համալիր փորձարկման դրական արդյունքներից հետո:

2.7.15. Կենտրոնի կողմից մշակվում են ախտածնության I խմբի միկրոօրգանիզմների հետ աշխատանքների կազմակերպման և իրականացման, կենսաբանական անվտանգության համակարգերի շահագործման և դրանց գործունեության արդյունավետության հսկողության աշխատանքային մանրամասն հրահանգներ: Աշխատանքային հրահանգների հիման վրա կազմակերպվում և իրականացվում են սեմինար պարապմունքներ «վարակիչ» գոտում մշտական աշխատող անձնակազմի համար, որից հետո ստուգվում են գիտելիքները և տրվում է աշխատանքի թույլտվություն: Հսկող և տեսչական ծառայությունների անձնակազմը «վարակիչ» գոտի մուտքի թույլտվություն ստանում է համանման կարգով:

2.7.16. Մշակվում են արտակարգ իրավիճակներում գործողությունների հրահանգներ և միջոցառումների ծրագրեր: Լաբորատորիաների և ինժեներատեխնիկական անձնակազմերը տեսական և գործնական ուսուցում են անցնում վթարների և վթարային իրավիճակների վերացման ժամանակ իրականացվող գործողությունների վերաբերյալ:

## 2.8. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

2.8.1. Լաբորատորիայի աշխատանքում օգտագործվող գործիքները, սարքավորումներն ու չափման միջոցները պետք է լինեն աստիճանավորված, տեխնիկապես անթերի վիճակում, ունենան տեխնիկական անձնագիր և շահագործման հրահանգ՝ հաշվի առնելով կենսաբանական անվտանգության պահանջները: Չափման միջոցները սահմանված ժամկետներում ենթարկվում են չափագիտական հսկողության:

2.8.2. Այստաժին կենսաբանական ազդակների հետ աշխատանքի համար նախատեսված նոր սարքավորումների, գործիքների շահագործումը, նոր մեթոդների կիրառումն իրականացվում է աշխատող անձնակազմի պաշտպանության հուսալիության և արտաքին միջավայրի աղտոտման բացակայության համալիր փորձաքննությունից հետո:

2.8.3. Ստորաբաժանումների լաբորատոր սարքավորումների և կենսաբանական անվտանգության ապահովման ինժեներային համակարգերի ծրագրային-նախագրողական վերանորոգումը կատարվում է ինժեներատեխնիկական ծառայությունների մասնագետների կողմից՝ տարեկան ժամանակացույցին համապատասխան:

2.8.4. «Վարակիչ» գոտու նպատակային նշանակության սենյակներում (ռադիոիզոտոպային, կենսաքիմիական, էլեկտրոնային միկրոսկոպիայի և այլն)

իրականացվող աշխատանքը պետք է համապատասխանի անվտանգության տեխնիկայի պահանջներին:

2.8.5. Հիստոցիտոէնզիմաքիմիական հետազոտությունները կատարվում են ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի, բրուցելլոզի և սիբիրյան խոցի հարուցիչներով վարակված կամ կասկածելի վարակված նյութի նախնական մշակման վերաբերյալ նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

2.8.6. Հետազոտության ենթակա նյութը լաբորատորիա է բերվում բեռնարկղերում, բիքսերում կամ պայուսակ-սառնարաններում: Այստեղից կենսաբանական ազդակները փաթեթավորման կանոնները կանոնակարգվում են միկրոօրգանիզմների հաշվառման, պահպանման, փոխանցման և տեղափոխման կարգի վերաբերյալ նորմատիվ փաստաթղթերով:

2.8.7. Տեղափոխված նյութի ընդունումը և տեսակավորումը կատարվում է նախազգուշական միջոցների պահպանումով: Այստեղից կենսաբանական ազդակներով տարողությունները դրվում են ախտահանիչ լուծույթով թրջված, բազմաշերտ թանգիֆե անձեռոցիկով ծածկված մատուցարանի վրա: Պաշտպանական հագուստի տեսակը որոշվում է ախտածին կենսաբանական ազդակի տեսակով:

2.8.8. Մանրէաբանական սենյակներ (բոքսեր) անձնակազմի մուտքը և ելքը կատարվում է նախաբոքսերով (անցախցերով), որտեղ աշխատակիցները հագնում և հանում են պաշտպանական հագուստը:

2.8.9. Աշխատանքի ընթացքում բոքսերի և նախաբոքսերի դռները պետք է փակ լինեն: Աշխատանքի ընթացքում բոքսերից դուրս գալ չի թույլատրվում:

2.8. Այստեղից կենսաբանական ազդակների հետ իրականացվող աշխատանքների համար կարող են կիրառվել II-III կարգի կենսաբանական անվտանգության բոքսեր:

2.8.11. II կարգի կենսաբանական անվտանգության բոքսի դռնատեղում օդի հոսքի արագությունը պետք է լինի 0,4-0,75 մ/վ, III կարգի բոքսերում օդի նոսրացումը սենյակի համեմատ պետք է լինի ջրի սյան 20 մմ:

Կենսաբանական անվտանգության բոքսերում բոլոր տեսակի աշխատանքները կատարվում են ախտահանիչ լուծույթով թրջված հատուկ հենարանների վրա:

2.8.12. Կենսաբանական անվտանգության բոքսում աշխատանքը սկսելուց առաջ միացվում է օդափոխության համակարգը, III կարգի կենսաբանական անվտանգության բոքսերում ստուգվում է բացասական ճնշման առկայությունը բոքսային մոնոմետրի սանդղակով: Բոքսում ստուգվում է սարքավորումների սարքինությունը և ախտահանիչ միջոցների վթարային պաշարի առկայությունը և բեռնվում է նյութը:

2.8.13. Ամբողջ աշխատանքը պետք է կատարվի II կարգի կենսաբանական անվտանգության բոքսի հետին պատին մոտ և տեսանելի լինի դրսից:

2.8.14. Այստաժին կենսաբանական ազդակներով բեռնարկի հեռացումից հետո կենսաբանական անվտանգության բոքսի դուռը փակվում է, բոքսի ներսում միացվում են մանրէասպան լամպերը:

2.8.15. Այստաժին կենսաբանական ազդակների հետ իրականացվող բոլոր աշխատանքները կատարվում են զույգության սկզբունքով (երկու մարդուց ոչ պակաս, որոնցից մեկը բժիշկ է կամ գիտաշխատող): Նման նյութի հետ անընդմեջ աշխատանքի տևողությունը չպետք է գերազանցի 4 ժամից, որից հետո սահմանվում է 30-60 րոպե ընդմիջում:

2.8.16. Մանրէային վարակների շճաբանական հետազոտությունների ժամանակ կատարվում է նյութի նախնական մշակում:

Արյան շիճուկները և կախությունները վարակազերծում են, ավելացնելով նատրիումի մերթիոլատ, մինչև 1:10000 խտության, հետո տաքացնում են 56°C 30 րոպե: Ներքին օրգաններից արյուն և լվացուկներ վերցնելու համար թույլատրվում է 1:1000 խտության նատրիումի մերթիոլատով ներծծված ֆիլտրի թղթերի կիրառումը (վարակազերծման տևողությունը՝ 1 ժամ սենյակային ջերմաստիճանում):

Կենդանիների ներքին օրգանների, ողնուղեղի կախուկների, հիվանդ մարդկանցից վերցված նյութերի, թռչունների և կաթնասունների բներից վերցված նյութերի, գիշատիչ թռչունների արտաթորանքները (փսխման մասսաների), մանրէային կախուկների վարակազերծման ռեժիմը որոշվում է հարուցչի տեսակով.

- ժանտախտի հարուցիչները վարակազերծելու համար ավելացնում են մանրէասպան ազդեցությունը ստուգված ֆորմալին, հասցնելով 1-2 % վերջնական խտության և պահում 12 ժամից ոչ պակաս կամ ավելացնում են մինչև 4% խտության և պահում սենյակի ջերմաստիճանում 1 ժամ
- բրուցելլոզի և տուլարեմիայի հարուցիչները վարակազերծվում են եռացնելով 20 րոպե, հետո ավելացնում են ֆորմալին մինչև 2% խտության և պահում 2 ժամ սենյակային ջերմաստիճանում
- խլնախտի հարուցիչը վարակազերծում են ավելացնելով ֆորմալին մինչև 4% խտության և պահում 12 ժամ
- խոլերայի հարուցիչները վարակազերծում են եռացնելով 30 րոպե
- սիբիրյան խոցի հարուցիչը վարակազերծում են եռացնելով 60 րոպե, հետո ավելացնում ֆորմալին մինչև 4% խտության և պահում 1 ժամ

2.8.17. Նատրիումի մերթիոլատի և ֆորմալինի որակը պարտադիր ստուգվում են:

2.8.18. Մշակման արդյունավետությունը ստուգվում է հարուցչի բացակայության փորձով («հատուկ ստերջություն»): Արդյունավետության հսկողությունը կանոնակարգվում է համապատասխան նորմատիվային փաստաթղթերով, որոնք մշակվում և հաստատվում են սահմանված կարգով:

2.8.19. I-II խմբերի հարուցիչների հակածինների առկայության շտապ որոշման անհրաժեշտության դեպքում, նյութի մշակման կամ հարուցչի բազակայության փորձ դնելու համար ժամանակի սղության պայմաններում, շճաբանական հետազոտությունները կատարվում են «վարակիչ» գոտում՝ պահպանելով կենսաբանական անվտանգության պահանջները:

2.8.20. Հարուցչի բազակայության նկատմամբ չստուգված, վարակազերծված նյութի շտապ փոխադրման անհրաժեշտության դեպքում այն տեղափոխում են որպես վարակիչ նյութ:

2.8.21. Ախտածնության II խմբի վիրուսների հակածինների կամ հակամարմինների հայտնաբերման շճաբանական հետազոտությունները կատարվում են միայն բոքս-սենյակներում կամ կենսաբանական անվտանգության բոքսերում՝ վիրուսների ապակտիվացման կանոնակարգված մեթոդների բազակայության պատճառով:

2.8.22. Կաթոցավորման ժամանակ օգտագործվում են միայն ռետինե տանձեր կամ ավտոմատ սարքեր: Ըստ որում կաթոցիչի ծայրը պետք է միշտ ցածր լինի անոթում հեղուկի մակարդակից կամ կաթոցիչից հեղուկը պետք հոսի անոթի ներքին պատով: Արգելվում է հեղուկ կուլտուրաները տեղափոխել առանց կաթոցիչի օգտագործման: Ազարի մակերեսից կուլտուրաների վերցնումը կատարվում է մանրէաբանական օդակով, մետաղական, ապակյա կամ պլաստմասե թիակով (շպատելով):

2.8.23. Հավերի զարգացող էմբրիոնների վարակման ժամանակ օգտագործվում են միայն բույս ասնդներ:

2.8.24. Օգտագործումից առաջ պետք է ստուգվեն ամանեղենի, կաթոցիչների, սարքավորումների, ներարկիչների և այլնի ամբողջականությունն ու սարքինությունը:

2.8.25. Մանրէաբանական օդակը պետք է լինի փակ, ունենա 6սմ-ից ոչ ավել նրկարությամբ բազուկ: Թույլատրվում է ավելի նրկար բազուկով միանվազ օգտագործման պատրաստի օդակների կիրառումը:

2.8.26. Չի թույլատրվում քսուրները ֆիքսել տաքացնելով: Ֆիքսատորներով կամ ներկանյութերով մշակված քսուրները ենթակա են հետագա վարակազերծման «Մարդու համար ախտածին միկրոօրգանիզմներով վարակված օբյեկտների վարակազերծման ռեժիմը» նորմատիվային փաստաթղթի համապատասխան:

Ֆիքսման համար օգտագործվում է 96° էթիլ սպիրտ, Նիկիֆորովի խառնուրդ (սպիրտի և եթերի հավասար քանակներ), ացետոն, իսկ սիբիրախտի կամ անհայտ ծագումնաբանության հարուցիչ պարունակող նյութի հետազոտության ժամանակ՝ 96° էթիլ սպիրտ՝ ավելացնելով մինչև 3%-անոց խտության ջրածնի գերօքսիդ: Ֆիքսման ժամանակը՝ 30 րոպե:

2.8.27. Բարձր խտությունների ( $10^{10}$  մմ/մլ-ից ավելի), մեծ ծավալների (տարողությունում 500մլ-ից ավելի) հետ աշխատանքները կատարվում են II-III կարգի կենսաբանական

անվտանգության բոքսերում կամ համապատասխան տիպի հակաժանտախտային կոստյումով:

2.8.28. Ախտածնության I-II խմբերի հարուցիչների կուլտուրաների լիոֆիլիզացման աշխատանքները կատարվում են նորմատիվ փաստաթղթերին համապատասխան:

2.8.29. Չորացված կուլտուրաներով սրվակները բացվում են կենդանի կուլտուրաների թանգարանի բոքսով սենյակում կամ կենսաբանական անվտանգության բոքսում: Սրվակի ձգված մասը տաքացվում է այրոցի բոցի վրա, հետո մանրէազերծ բամբակե խծուծի թաց ծայրով ծածկում են տաքացված մասը, որի արդյունքում առաջանում են ճաքեր: Սրվակի ծայրը ծածկվում է ախտահանիչ լուծույթով թրջված և լավ քամված եռաշերտ թանգիֆե անձեռոցիկով և կոտրվում նրբունելիով:

Բացելուց հետո սրվակը 1-2 րոպե մնում է ծածկված նույն անձեռոցիկով, հետո անձեռոցիկը զգուշությամբ հեռացվում է և ապակու մնացորդների հետ ընկղմվում ախտահանիչ լուծույթի մեջ: Բացած սրվակը 1-2 րոպե ծածկվում է մանրէազերծ բամբակե խծուծով, այնուհետև սրվակի մեջ ներարկվում է կախուկի պատրաստման համար նախատեսված լուծույթը, և ստացված կախուկից ցանվում է պինդ և հեղուկ սննդային միջավայրերի վրա: Կուլտուրաներով ցանքերը սննդային միջավայրերի վրա հանձնում են լաբորատորիա:

2.8.30. Չի թույլատրվում աշխատանքն ավարտելուց հետո չփակվող տարածքներում կամ չկնիքված պահեստարաններում թողնել չփիքսված քսուքներ, ախտածին կենսաբանական ազդակներ պարունակող ցանքերով օբյեկտներ և այլ նյութեր: Թույլատրվում է սնդաններին և կենսաբանական անվտանգության բոքսերում թողնել մակագրված, բայց չցանված ամանեղեն՝ համապատասխան նախագրուշական գրառումով: Կուլտուրաներով և ցանքերով օբյեկտների մակագրությունները պետք է լինեն հստակ, ցանվող նյութի մանրամասն անվանումով և ցանքսի ամսաթվով:

2.8.31. Ախտածին կենսաբանական ազդակների հետ աշխատանքի ավարտից հետո ցանքեր պարունակող օբյեկտները տեղափոխում են պահեստարաններ (սառնարաններ, թերմոստատներ, չիրկիզվող պահարաններ և այլն):

Լաբորատորիայի »վարակիչ« գոտուց մնացորդները, օգտագործված ամանեղենը, պինդ և հեղուկ մնացորդները հավաքվում են փակվող տարողությունների մեջ և փոխանցվում ավտոկլավներ կամ ախտահանվում տեղում: Չի թույլատրվում չվարակազերծված հեղուկները լցնել կոյուղու համակարգ:

2.8.32. Արյան մակարդուկներ պարունակող տարողությունները (փորձանոթներ, սրվակներ) ախտահանվում են միայն ախտահանիչ լուծույթներով: Ընկղման ժամանակ անհրաժեշտ է ցուցաբերել զգուշություն: Տարողությունն անատոմիական ունելիով վերցվում է այնպես, որ նրա մեկ ճյուղը մի փոքր ներս մտնի և թեք դիրքով ընկղմվի ախտահանիչ լուծույթի մեջ՝ մինչև լուծույթով լրիվ լցվելը: Ճիշտ ընկղման դեպքում օդային պղպջակներ չեն

առաջանում և տարողությունը իջնում է մինչև հատակ: Տարողություններն ընկղմելուց հետո ունելին վարակազերծվում է:

2.8.33. Օգտագործած կաթոցիչներն ամբողջությամբ ընկղմվում են ախտահանիչ լուծույթի մեջ այնպես, որ մղանցքներում օդի պղպջակներ չառաջանան: Հետագա վարակազերծումը կատարվում է ավտոկլավում:

2.8.34. Վարակիչ նյութը ավտոկլավի համար նախատեսված տարողություններով՝ դրված բարձր կողերով (20 սմ) մետաղական ընդկալների վրա, ավտոկլավի սենյակ է տեղափոխում կրտսեր և միջին անձնակազմն ախտածին կենսաբանական ազդակների հետ աշխատանքի թույլտվություն ունեցող պատասխանատու անձի ուղեկցությամբ՝ համապատասխան տիպի պաշտպանական հագուստով: Ծարժը կատարվում է որոշակի նրթուղիով, ավտոկլավի սենյակ նյութի տեղափոխման ժամանակ տվյալ ուղղությամբ ցանկացած շարժում դադարեցվում է:

2.8.35. Ավտոկլավի համար նախատեսված բեռնարկղերի կողմնային պատերի վերին մասերում պետք է լինեն անցքեր գոլորշու ազատ շրջանառությունն ապահովելու համար: Բեռնարկղերի և ընդկալների ամբողջականությունը ստուգվում է յուրաքանչյուր օգտագործումից առաջ:

2.8.36. Մի ստորաբաժանումից մյուսը հարուցիչների կուլտուրաների տեղափոխումը կատարվում է ախտածին կենսաբանական ազդակների հետ աշխատանքի թույլտվություն ունեցող անձնաց կողմից՝ ուղեկցողի ներկայությամբ (բժիշկ, գիտաշխատող, լաբորանտ):

2.8.37. Ախտածին կենսաբանական ազդակների տեղափոխման համար նախատեսված բեռնարկղիկները պետք է պատրաստված լինեն ամուր, կոռոզիայի չենթարկվող նյութից: Հատակը պետք է ծածկված լինի փափուկ, արտահոսքի դեպքում ամբողջ հեղուկի կլանման համար բավարար քանակի կլանող նյութով: Կափարիչը պետք ամուր փակվի: Բեռարկղիկները պետք է ունենան հարմար բռնակներ:

2.8.38. Սննդամթերքի պահումը և սննդի ընդունումը կատարվում է լաբորատորիայի սահմաններից դուրս՝ կազմակերպության »մաքուր« գոտու հատուկ առանձնացված վայրերում:

2.8.39. Չի թույլատրվում աշխատակցին դուրս կանչել ախտածին կենսաբանական ազդակների հետ ցանկացած տեսակի աշխատանք կատարելու ժամանակ:

Չի թույլատրվում աշխատաքների կատարման ժամանակ, աշխատանքի հետ անմիջական առնչություն չունեցող մարդկանց մուտքը շինություն:

2.8.40. Լաբորատորիայի »վարակիչ« գոտուց սարքավորումների, լաբորատոր կամ տնտեսական ամանեղենի, ռեակտիվների, գործիքների և այլնի դուրս բերումը կատարվում է դրանց ախտահանումից հետո լաբորատորիայի ղեկավարի թույլտվությամբ: Կազմակերպության սահմաններից նշված նյութերի դուրս բերումը կատարվում է կազմակերպության ղեկավարի գրավոր թույլտվությամբ:

2.8.41. Անձնակազմի անհատական պաշտպանության համար օգտագործվում են անհատական պաշտպանության միջոցներ: Օգտագործելուց հետո անհատական պաշտպանության միջոցները ախտահանվում են:

2.8.42. Չի թույլատրվում միևնույն շինությունում միաժամանակ աշխատել ախտորոշիչ նյութերի, միկրոօրգանիզմների կուլտուրաների և պատվաստանյութերի հետ:

2.8.43. Չեն թույլատրվում հակաբիոտիկալայուն ախտածին շտամերի հետ իրականացվող փորձարարական աշխատանքները, եթե կազմակերպությունում բացակայում են դեղամիջոցներ, որոնց նկատմամբ տվյալ շտամերը զգայուն են (երկու պատրաստուկից ոչ պակաս):

2.8.44. Անհրաժեշտության դեպքում միևնույն շինությունում թույլատրվում է հետևյալ տեսակի աշխատանքների իրականացում.

- միաժամանակ տարբեր տեսակների (շտամերի) հարուցիչների հետ: Ընդ որում կենսաբանական անվտանգությունն ապահովվում է օգտագործվող տեսակային, շտամային և այլ առանձնահատկություններով պայմանավորված ավելի խիստ պահանջներին համապատասխան,

- ախտորոշիչ և փորձարարական հետազոտություններ՝ տարբեր ժամերի և յուրաքանչյուր փուլից հետո անհրաժեշտ է իրականացնել եզրափակիչ ախտահանում:

2.8.45. Ծինությունից դուրս գալուց առաջ ստուգվում է գազը, ջուրը և այլ սարքերը: Լաբորատորիայի »վարակիչ« գոտու սենյակները կնիքվում և փակվում են կողպեքով: Լաբորատորիայի բացումը և կնիքների հանումը, ինչնպես նաև կողպումը և կնիքումը կատարվում է կազմակերպության (լաբորատորիայի) ղեկավարի կողմից թույլտվություն ունեցող աշխատակիցների (գիտաշխատողներ, բժիշկներ, լաբորանտներ) կողմից:

2.8.46. Լաբորատորիայի վարակիչ գոտում, որտեղ կատարվում են ախտածին կենսաբանական ազդակների հետ աշխատանքներ, գրառումները կատարվում են առանձին թերթիկների վրա և դուրս բերելուց առաջ վարակազերծում են:

2.8.47. Իրավաբանական անձիք, անկախ կազմակերպաիրավական և սեփականության ձևերից, ֆիզիկական անձիք, այդ թվում, նաև անհատ ձեռներեցները, որոնք աշխատում են ախտածին կենսաբանական ազդակների հետ, կանոնավոր կերպով ստուգում են արտահոս օդափոխության նուրբ մաքրման ֆիլտրերի արդյունավետությունը և առհասարակ ջրերը (կեղտաջրերը) ախտածին միկրոֆլորայի նկատմամբ, իսկ սիբիրախտի ախտածին կուլտուրաների հետ աշխատանքի դեպքում՝ ամիսը մեկ անգամ ստուգվում է աշխատասենյակի վարակվածությունը սպորներով:

2.9. ԽՈՐԸ ՄԻԿՈԶՆԵՐԻ ՀԱՐՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ  
ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՁՆԵՐ

2.9.1. Միգելային փուլի կուլտուրաների հետ կատարվող բոլոր գործողությունները, ինչպես նաև սնկերի գոյատևման ուսումնասիրությունները նրանց բոլոր փուլերում կատարվում են III կարգի կենսաբանական անվտանգության բոքսերում:

2.9.2. Սնկերի միգելային փուլերի ցանքերի դիտումը կատարվում է բոքս-սենյակներում՝ IV տիպի կոստյումով և բամբակ-թանգիֆե դիմակով:

2.9.3. Սնկերի միգելային փուլերի հետ աշխատանքի ժամանակ ցանքերով ազարային թասերը պահվում են թերմոստատում 5 օրից ոչ ավել (մինչև սպորավորման սկիզբը), օդակաթիլային ճանապարհով վարակումը կանխելու նպատակով: Չի թույլատրվում բացել սնկերի միգելային փուլի ցանքերով ազարային թասերը և փորձանոթները կենսաբանական անվտանգության բոքսից (ծածկից) դուրս:

2.9.4. Սնկերի խմորման փուլերի հետ աշխատանքը իրականացվում է բոքս-սենյակում III տիպի կոստյումով և դիմակով, իսկ շճաբանական հետազոտությունները՝ IV տիպի կոստյումով:

2.9.5. Բջջային էլեմենտները Գորյակի խցում հաշվելու համար սնկային կախուկները վարակազերծում են :

2.9.6. Լաբորատոր կենդանիների վարակելիս նյութի ներարկման տեղը մշակում են յոդի 1%-անոց թուրմով:

2.10. ՆՅՈՒԹԻ ՎԱՐԱԿԱԶԵՐԾՄԱՆԸ ԵՎ ՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՄԱՔՐՄԱՆԸ  
ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

2.10.1. Ախտածին կենսաբանական ազդակների հետ աշխատանքի ժամանակ տարբեր օբյեկտների վարակազերծումը կատարվում է սույն կարգի և նորմատիվային փաստաթղթերի համապատասխան:

2.10.2. Վարակազերծման մեթոդները և միջոցները յուրաքանչյուր կոնկրետ դեպքում որոշվում են ելնելով ախտածին կենսաբանական ազդակների տեսակից, վարակազերծման ենթակա նյութի բնույթից և ծավալից:

2.10.3. Ախտահանման, միջատասպան և կրծողասպան աշխատանքները կատարում են միայն այն պատրաստուկներով, որոնք թույլատրված են ՀՀ տարածքում օգտագործման համար:

2.10.4. Կազմակերպության պահեստ մուտք գործած նոր ախտահանման միջոցները ստուգում են ակտիվ նյութի տոկոսային պարունակության նկատմամբ: Ախտահանման նյութերի ստուգումն իրականացվում է սահմանված կարգով:

- 2.10.5. Լաբորատորիայում պահվում է ախտահանող միջոցների նվազագույնը մեկ շաբաթյա պաշար:
- 2.10.6. Ախտահանիչ լուծույթները պատրաստվում են հատուկ սարքավորված սենյակում լաբորանտների կամ ախտահանողների կողմից՝ բժշկի (գիտաշխատողի) հսկողությամբ: Աշխատանքային լուծույթների օգտագործման ժամկետները սահմանվում են ախտահանիչ միջոցների օգտագործման վերաբերյալ նորմատիվ փաստաթղթերով:
- 2.10.7. Ախտահանիչ լուծույթներով տարողությունները պիտակավորվում են նորմատիվ փաստաթղթերին համապատասխան:
- 2.10.8. Միջատասպան միջոցներին ներկայացվում են նույն պահանջները, ինչ ախտահանիչ միջոցներին (2.10.3.-2.10.6.):
- 2.10.9. Նյութի վարակազերծումն ապահովում է կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը կամ նրա կողմից նշանակված բժիշկը (գիտաշխատողը): Նյութի կենտրոնացված վարակազերծման համար ստորաբաժանման առկայության դեպքում այն ապահովում է տվյալ ստորաբաժանման ղեկավարը:
- 2.10.10. Ավտոկլավի հետ աշխատանքն իրականացնում են հատուկ դասընթացներ անցած անձնակազմի կողմից:
- 2.10.11. Ավտոկլավների աշխատանքի ստուգումն իրականացվում է համապատասխան նորմատիվային փաստաթղթերով:
- 2.10.12. Լաբորատորիաներում պահպանվում է մաքրություն, այնտեղ չպետք է լինեն աշխատանքի հետ չառնչվող նյութեր և առարկաներ:
- 2.10.13. Աշխատանքային մակերեսների ընթացիկ ախտահանումից և մանրէասպան լամպերով ճառագայթումից հետո, կրտսեր անձնակազմը կատարում է բոքսերի (մանրէաբանական սենյակների) ամենօրյա խոնավ մաքրում: Մաքրումը կատարվում է պաշտպանական հագուստով՝ լաբորանտի հսկողությամբ: Խոնավ մաքրումից հետո կատարվում է օդի և մակերեսների վարակազերծում մանրէասպան լամպերով՝ նորմատիվային փաստաթղթերին համապատասխան:
- 2.10.14. Լաբորատոր սեղաններն ու անվտանգության բոքսերը աշխատանքի համար նախապատրաստում են լաբորանտները:
- 2.10.15. «Վարակիչ» գոտու աշխատանքային մակերեսները ախտահանում են աշխատանքի յուրաքանչյուր փուլի ավարտից հետո:
- 2.10.16. «Վարակիչ» գոտում յուրաքանչյուր շաբաթ իրականացվում է ընդհանուր մաքրում: Կահույքի, սարքերի, ինչպես նաև պատերի (մինչև 2մ) մակերեսները մաքրում են ախտահանիչ լուծույթներով: Խոնավ մաքրումից հետո կատարում են օդի և մակերեսների վարակազերծում մանրէասպան լամպերով:
- 2.10.17. Մանրէասպան լամպերի ապակյա մակերեսները սրբում են 70<sup>0</sup> էթիլ սպիրտով թրջած լաթով շաբաթը մեկ անգամից ոչ պակաս:

2.10.18. Մաքրման համար անհրաժեշտ գույքը պետք է պիտակավորվի առանձին «մաքուր» և «վարակիչ» գոտիների համար: Չի թույլատրվում դրանց տեղափոխումը մի գոտուց մյուսը:

2.10.19. «Վարակիչ» գոտու աղբը վարակազերծվում է:

2.10.20. Սառնարանները պարբերաբար (ամիսը մեկ անգամ) մաքրում են սառցակեղևից և ախտահանում են: Թերմոսատատերը ախտահանում են ամիսը մեկ անգամ:

## 2.11. ՎԱՐԱԿՎԱԾ ԿԵՆՂԱՆԻՆԵՐԻ ԲԼՈԿՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՏԱՆՁՆԵՐ

2.11.1. Կենսափորձի կենդանիների վարակման, հերձման և պահման բոլոր տեսակի աշխատանքները, վարակված կենդանիների և հողվածոտանիների հետ այլ գործողությունները, ինչպես նաև կլինիկական, սնկցիոն և դաշտային նյութի ընդունումը և առաջնային մշակումը (բացառությամբ խոլերայի նկատմամբ նմուշների և ախտածնության II խմբի հարուցիչների նկատմամբ հակամարմինների հայտնաբերման համար արյան նմուշների) կատարվում են վարակված կենդանիների բլոկում:

2.11.2. Լաբորատոր կենդանիների վարակումը և հերձումը կատարում են բժշկական, կենսաբանական կամ անասնաբուժական կրթություն և I-II խմբերի ախտածին կենսաբանական ազդակների հետ աշխատանքի թույլտվություն ունեցող անձինք:

2.11.3. Վարակված կենդանիների կառուցահատվածում բոլոր տեսակի աշխատանքները կատարվում են գույգույթան սկզբունքով:

2.11.4. Վարակված կենդանիների կառուցահատվածում կատարված այցելությունները գրանցվում են մատյանում՝ նշելով այնտեղ մնալու ժամանակը և կատարված աշխատանքի բնույթը:

2.11.5. Անձնակազմը վարակված կենդանիների հետ աշխատանքի բլոկ մտնում է պաշտպանական հագուստը հագնելու սենյակով, դուրս է գալիս պաշտպանական հագուստը հանելու և վարակազերծման սենյակով:

2.11.6. Չի թույլատրվում միևնույն սենյակում հագնել պաշտպանական հագուստը, և հանել՝ աշխատանքից հետո:

2.11.7. Վարակված մանր կենդանիները և էկտոմակաբույծները պահվում են վարակված կենդանիների բլոկում հետևյալ կանոնների պահպանումով.

- մանր կենդանիները տեղավորվում են նախօրոք ամբողջականությունը ստուգված և պիտակավորված ապակյա տարողություններում, արկղերի մեջ: Ապակյա տարողությունները և արկղերը փակվում են ցանցավոր կափարիչներով՝ կենդանիների ելքը կանխելու նպատակով,

- էկտոմակաբույծները տեղավորվում են մանր ցանցավոր գործվածքով ամուր կապված բանկանների և սրվակների մեջ, ինչպես նաև բամբակ-թանգիֆեն կամ կեղևային խցանով փակված փորձանոթների մեջ,

- տարբեր տեսակի միկրոօրգանիզմներով վարակված կենդանիները պահվում են առանձին,

- կենդանիներով ապակյա տարողություններում տեղավորվում են յուղաներկով ներկված մետաղական (փայտե) դարակաշարերի վրա կամ ցանցապատված պահարանների մեջ, իսկ էկտոմակաբույծներով անոթները՝ նմանատիպ պահարանների, սառնարանների կամ թերմոստատների մեջ,

- սիբիրախտի, խորը միկոզների հարուցիչներով վարակված կենդանիներով ապակյա տարողություններում տեղավորվում են մետաղական կամ թիթեղապատ փայտե դարակաշարերի վրա,

- ապակյա տարողություններում փռոցային նյութի կուտակման դեպքում (բանկայի 1/3) կենդանիներին տեղավորվում են մաքուր ապակյա տարողությունների մեջ, իսկ օգտագործվածները լցվում են ախտահանիչ լուծույթով կամ ախտահանում ավտոկլավում:

2.11.8. Հերձման ենթակա կենդանիներին սատկացնում են քլոֆորմով, եթերով կամ թույլատրելի այլ եղանակներով:

2.11.9. Հերձելուց առաջ կենդանիների դիակներն ընկղմում են օճառային լուծույթի մեջ, հետո տեղավորվում կյուվետի մեջ դրված հերձման համար նախատեսված տախտակի վրա և ֆիքսում: Հերձման համար օգտագործում են գործիքների երկու հավաքածու (առանձին մաշկը կտրելու և առանձին օրգանների կտորները վերցնելու համար):

2.11.10. Նյութը վերցնելուց հետո հերձված կենդանին վարակազերծվում է:

2.11.11. կենդանիների հերձումից հետո գործիքները, հերձման տախտակները, ապակյա տարողությունները, բաքերը, փռոցային նյութը վարակազերծում են:

2.11.12. Վարակված կենդանիների համար նախատեսված կառուցահատվածում չի թույլատրվում:

- մաքրել չոր մնացորդներ պարունակող ապակյա տարողություններն ու արկղերը առանց նախապես ախտահանիչ լուծույթով թրջելու

- վերցնել սատկած կենդանիներին ձեռքերով՝ առանց կորնցանգի

2.11.13. Վարակազերծված կարծր մնացորդների և կենդանիների մսեղիքի ոչնչացման համար օգտագործվում է դիակիզարան կամ առանձնացված և ՀՀ ԱՆ ՊՀՀ տեսչության հետ համաձայնեցված գերեզմանատեղեր:

2.12. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ  
ԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՏԱՆՁՆԵՐ

2.12.1. Այստաժին կենսաբանական ազդակների հետ աշխատող յուրաքանչյուր աշխատակից պետք է ապահովված լինի հատուկ աշխատանքային, պաշտպանական հագուստով և կոշիկներով, շնչառության, տեսողության, մաշկային ծածկույթների պաշտպանության համար նախատեսված միջոցներով՝ հաստատված նորմերին համապատասխան: Անհատական պաշտպանիչ միջոցների քանակը և դրանց փոխելու պարբերականությունը սահմանում է կազմակերպության ղեկավարը՝ ելնելով աշխատանքի բնույթի:

2.12.2. Հագուստը և կոշիկները պետք է լինեն անհատական: Աշխատանքային հագուստները պահվում են սանթողարանում աշխատակիցների անհատական պահարաններում՝ անձնական հագուստներից առանձին, պաշտպանական հագուստները՝ նրանց հագնելու տեղում:

2.12.3. Պնևմոկոստյումները, պնևմոգլխարկները, մեկուսացնող կոստյումները, հակազազերի արկղերը և այլն պետք է համարակալվեն: Յուրաքանչյուրի համար օգտագործման ժամանակի խիստ հաշվառում է կատարվում: Օգտագործման ժամանակը գրանցվում է հատուկ մատյանում:

2.12.4. Անհատական պաշտպանության միջոցների ճիշտ շահագործումն ապահովելու համար ստորաբաժանման ղեկավարը նշանակում է պատասխանատու աշխատակցի, որի պարտականությունների մեջ մտնում է անհատական պաշտպանության միջոցների նախապատրաստման և ստուգման հսկողությունը, անհատական պաշտպանության միջոցների շահագործման ժամանակի հաշվառումը, ինչպես նաև ժամկետանց, հյուսվածքի ամբողջականության և կարերի խախտումով անհատական պաշտպանության միջոցների դուրս գրումը:

2.12.5. Յուրաքանչյուր օգտագործումից առաջ հատուկ ստուգվում է պնևմոկոստյումների ամբողջականությունը: Մեկուսացնող կոստյումները և պնևմոգլխարկները ենթարկվում են ակնադիտական ստուգման:

2.12.6. Պնևմոկոստյումները և մեկուսացնող կոստյումները վարակազերծվում են յուրաքանչյուր օգտագործումից հետո: Վարակված կենդանիների կառուցահատվածում անհատական պաշտպանության միջոցները նույնպես վարակազերծվում են աշխատանքից հետո:

Լաբորատորիաներում աշխատանքի ժամանակ պաշտպանական հագուստը փոխում են կեղտոտվելիս, քայց շաքաթը մեկ անգամից ոչ պակաս:

2.12.7. Պաշտպանական հագուստների և հակազազերի վարակազերծումը կատարվում է համապատասխան նորմատիվային փաստաթղթերով:

2.13. ԿԵՆԴՐԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԱԿԱԲՈՒԾԱԲԱՆԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՏԱՆՁՆԵՐ

2.13.1. Նատուկ վտանգավոր վարակների կանխարգելման կենտրոնի, այլ բժշկական սաքանական կազմակերպությունների աշխատակիցները, որոնք իրականացնում են կրծողների որս, էկտոմակաբույծների հավաք ժանտախտի և այլ բնական-օջախային վարակների օջախներում, կրծողների ոչնչացում, ինչպես նաև այլ դաշտային աշխատանքներ վայրի ողնաշարավոր և անողնաշարավոր կենդանիների հետ, ապահովվում են եղանակին համապատասխան պաշտպանական հագուստով:

2.13.2. Ժանտախտի բնական օջախներում աշխատանքի ժամանակ համազգեստը (կոմբինեզոն) և ճտքակոշիկները մշակում են կայուն ռեպելենտ կամ պիրետրինների տիպի կայուն միջատասպան նյութերով:

2.13.3. Կրծողների որսի և հողվածոտանիների հավաքման, դրանց ոչնչացման աշխատանքների ժամանակ ընդմիջումներից, ծխելուց առաջ և աշխատանքի ավարտից հետո ձեռքերը և գործիքները վարակազերծվում են համապատասխան ախտահանիչ լուծույթներով:

2.13.4. Դաշտում կանգառի վայրերը պետք է տեղակայված լինեն կրծողների բներից հեռու: Եթե դա հնարավոր չէ կրծողները ոչնչացվում են, վրանի տեղակայման վայրը մշակվում է փոշեման միջատասպան նյութերով:

2.13.5. Որսի գործիքները և այն բոլոր գործիքները /թակարդներ, էկտոմակաբույծների հավաքման ժապավեններ, սրվակներ, պարկեր և այլն/, որոնք աշխատանքի ընթացքում շփման մեջ են եղել կրծողների և էկտոմակաբույծների հետ, տեղափոխվում են փակ տարաների մեջ: Սարքավորումների և դաշտային նյութի տեղափոխումը լաբորատորիա կատարվում է դաշտային ջոկատի տրանսպորտով կամ լաբորատորիայի կողմից տրամադրված տրանսպորտով ախտածին կենսաբանական ազդակների հետ աշխատանքի իրավունք ունեցող աշխատակցի ուղեկցությամբ:

2.13.6. Որսի գործիքները, դաշտային նյութը պահվում են կողմնակի անձանց համար ոչ մատչելի վայրերում:

2.13.7. Որսված գազանիկները, անհրաժեշտության դեպքում, սատկացվում են անմիջապես թակարդներում քլորոֆորմով, եթերով և թույլատրված այլ մեթոդներով: Դիակները դրվում են բլազից պարկերի մեջ, որոնք տեղավորվում են արկղերում կամ մոմլաթե պարկերում: Բլազից պարկերը երկու անգամ ամուր կապվում են (երկրորդ անգամ տոպրակի շրջված ծայրով)՝ էկտոմակաբույծների տարածումը բացառելու նպատակով:

2.13.8. Կենդանի կրծողները տեղավորում են մետաղական կամ ներսից թիթեղապատ արկղերի մեջ: Մակաբուծաբանական և մանրէաբանական հետազոտությունների համար

նախատեսված էկտոմակաբույծները տեղափոխվում են մետաղական տուփերի մեջ տեղավորված բամբակ-թանգիֆն խցաններով փակված փորձանոթներով կամ բյազից պարկերում մեջ՝ ամուր խցաններով փակված հաստապատ ապակյա սրվակներով: Տեղափոխվող նյութի փաթեթի արտաքին մասին փակցվում է «Լենսաբանական վտանգ» նշանը:

2.13.9. Սատկած կրծողներին, պարկերից հանելուց հետո, սանրում են, իսկ կենդանի կրծողներին՝ դուստավորում նստարկղներում: Բերված էկտոմակաբույծներն ազատվում են ավազից և այլ նյութերից:

2.13.10. Բյազն պարկերի ախտահանումը կատարվում է յուրաքանչյուր օգտագործումից հետո՝ օճառասոդային լուծույթում 30 րոպե եռացման և մաքուր ջրում հաջորդող ողողման եղանակով: Էկտոմակաբույծներ պարունակող փորձանոթները և սրվակներն ախտահանվում են եռացման եղանակով:

2.13.11. Որսի գործիքների և այլ գործիքների ախտահանումը կատարվում է ամեն օր արևի տակ տաքացման (ամռանը), եռացման եղանակով, ախտահանիչ լուծույթներով մշակման եղանակով, որից հետո չորացնում և մշակում են բուսական յուղով: Արկղերը և թակարդները ախտահանվում են:

2.13.12. Էկտոմակաբույծների տեսակի որոշումը, լաբորատոր հետազոտությունները (կախուկի պատրաստում, ցանքս) կատարվում են «վարակիչ» գոտու սենյակներում: Էկտոմակաբույծները տեսակի որոշումից առաջ անշարժացվում են եթերի գոլորշիներով, շարվում առարկայական լայն ապակու վրա և չոր վիճակում դիտում մանրադիտակով: Էկտոմակաբույծներին ծածկապակու տակ ջրի կաթիլում կենդանի վիճակում դիտելու դեպքում առարկայական ապակին դնում են Պետրիի թասի մեջ՝ ապակուց հոսող ջրերով մանրադիտակի սեղանիկի աղտոտումը կանխելու նպատակով: Աշխատանքն ավարտելուց հետո Պետրիի թասերը և առարկայական ապակիներն ընկղմում են ախտահանիչ լուծույթի մեջ: Տզերից կախուկի պատրաստման ժամանակ հեղուկի ցայտումը կանխելու նպատակով տրորումից առաջ տզերին անհրաժեշտ է կտրտել մկրատով՝ ծածկելով Պետրիի թասի կափարիչով կամ մեծ ձագարով:

2.13.13. Էնզոոտիկ տարածքներում բռնված գազանիկների մորթազերծումը և մսեղիքների հավաքածուների պատրաստումը կատարվում է հետևյալ ձևով.

- ուսումնական նպատակների համար նախատեսված մսեղիքների պատրաստման դեպքում գազանիկին նախապես պահում են ֆորմալինի 10%-անոց լուծույթում, տևողությունը որոշվում է գազանիկի չափերով և հյուսվածքի մեջ ֆորմալինի թափանցման արագությամբ (օրական 1սմ): Ֆորմալինում ֆիքսված գազանիկի հետ աշխատանքները կարող են կատարել ցանկացած տեղում առանց պաշտպանական հագուստի:

- գիտական նպատակների համար նախատեսված մսեղիքի պատրաստման ժամանակ, նրբ ֆորմալինի ազդեցությունը անթույլատրելի է, մորթազերծումից առաջ

գազանիկը 10-15 րոպեով ընկղմվում է լիզոլի 5%-անոց լուծույթի մեջ: Հանված մորթին 3 ժամով տեղավորվում է լիզոլի 5%-անոց լուծույթի մեջ, որից հետո այն մաքրվում է ճարպից, լվացվում և ներսից մշակվում նատրիումի արսենատով: Գանգը պահվում է կամ ֆորմալինում, կամ ալստահանվում եռացման եղանակով: Կրծողի մորթազերծումը կատարվում է վարակված կենդանիների համար նախատեսված կառուցահատվածում՝ կենսաբանական անվտանգության պահանջների պահպանումով: Մորթազերծման և մսեղիքների պատրաստման բոլոր աշխատանքները թույլատրվում է կատարել անմիջապես ձեռքերով՝ ռետինե ձեռնոցներով: Աշխատանքը կատարվում է պաշտպանական հագուստով:

2.13.14. Վայրի թռչունների և գազանիկների արտաթորանքների քննությունները կատարվում են ֆորմալինի 1%-անոց լուծույթի մեջ 12-18 ժամ պահելուց հետո՝ ցանկացած ծառայողական սենյակում առանց պաշտպանական հագուստի:

2.13.15. Հավաքածու պատրաստուկների պատրաստման համար ընտրված արյունածուծ հողվածոտանիները ֆիքսվում են 70՝ էթիլ սպիրտով:

2.14. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՎԱՅՐԻ ՈՂՆԱՇԱՐԱՎՈՐ ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԻ ԵՎ ՀՈԴՎԱԾՈՏԱՆԻՆԵՐԻ ՈՐՄԻ, ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

2.14.1. Հատուկ վտանգավոր վարակների տեսակետից էնզոոտիկ տարածքներում հետազոտության համար վայրի կենդանիների և հողվածոտանիների որսը և դրանց դուրս բերումը բնական օջախի սահմաններից, կատարվում է ըստ սահմանված կարգի:

2.14.2. Հատուկ վտանգավոր վարակների տեսակետից ոչ էնզոոտիկ տարածքներում բժշկականաբանական ցանկացած հաստատություն կարող է իրականացնել ողնաշարավոր կենդանիների և արյունածուծ հողվածոտանիների որս և պահում համաձայն սահմանված կարգի:

2.14.3. Ցանկացած նյութ համարվում է պոտենցիալ վտանգավոր այն բնական օջախային հիվանդությունների հարուցիչների տեսակետից, որը բնորոշ այն լանդշաֆտային գոտուն, որի սահմաններից նյութը հավաքվել է:

2.14.4. Ձոկատի /գիտարշավի/ ամբողջ անձնակազմը պետք է իրազեկված լինի տվյալ տարածքի սահմաններում շրջանառող բնաօջախային վարակների հարուցիչների հետ աշխատանքի ժամանակ կենսաբանական անվտանգության պահանջներին: Վայրի կենդանիների որսի և պահպանման պահանջների պատասխանատուն համաձայնաբանական ջոկատի (գիտարշավի) ղեկավարն է (պետք):

2.14.5. Ժանտալստի տնասկնտից Էնգոտիկ տարածքներում աշխատելիս յուրաքանչյուր աշխատակից պարտավոր է կատարել ամենօրյա ջերմաչափում, որի արդյունքները գրացվում են համապատասխան մատյանում:

2.14.6. Բնության մեջ կենդանի որսված վայրի կենդանիները և հողվածոտանիները մինչ գիտական և այլ կազմակերպություններ տեղափոխելը պահվում են կարանտինում: Կարանտինային կենդանակազարանը (վիվարիում) կարելի է կազմակերպել ժամանակավոր համաճարակաբանական ջոկատի (գիտարշավի) կամ ստացիոնար կազմակերպության տարածքում: Կարանտինի տևողությունը մեկ ամիս է:

2.14.7. Կարանտինային կենդանակազարանի (վիվարիում) և ինսեկտարիայի շինությունները մեկուսացվում են այլ շինություններից և պաշտպանվում կրծողների և միջատների ներթափանցումից:

2.14.8. Վայրի ողնաշարավոր կենդանիները կարանտինային վիվարիում տեղափոխվում են ներսից թիթեղապատված փայտյա արկղերում, որոնք յուրաքանչյուր օգտագործումից հետո վարակազերծվում են:

2.14.9. Հողվածոտանիները (տզեր, ոջիլներ, լվեր) տեղափոխվում են բամբակ-թանգիֆե խցաններով փակված փորձանոթներով (թաց կամերաներ) տեղավորված մետաղական տուփերի մեջ, կամ ամուր փակվող խցաններով հաստապատ սրվակներով՝ տեղավորված քյազից պարկերի մեջ:

Հողվածոտանիներին տեղափոխող տրանսպորտային միջոցը պետք է համալրված լինի 0.5 կգ միջատասպան պատրաստուկով և փոշեցրման սարքով՝ էկտոմակաբույծների սրվակների և փորձանոթների ջարդով ուղեկցվող վթարների համար:

2.14.10. Կենդանիների տեղափոխումը կարանտինային կենդանակազարանում (վիվարիում) կատարվում է հատուկ առանձնացված տրանսպորտով՝ ախտածին կենսաբանական ազդակների հետ աշխատանքի թույլտվություն ունեցող աշխատակցի ուղեկցությամբ: Դաշտային նյութի տեղափոխումը հասարակական տրանսպորտով արգելվում է:

2.14.11. Կարանտինային կենդանակազարան բերված գազանիկներն ազատվում են էկտոմակաբույծներից և տեղափոխվում ամուր ցանցավոր կափարիչներով մետաղական կամ ապակյա տարրաների մեջ: Կենդանիների սանրումը և խնամքը կարանտինի ընթացքում կատարվում է պաշտպանական հագուստով՝ կենսաբանական անվտանգության պահանջների պահպանումով:

2.14.12. Ժանտալստի բնական օջախներից կարանտինային կանդանակազարան (վիվարիում) բերված կենդանիների թաթերից կամ պոչից արյուն է վերցվում մանրէբանական և շճաբանական հետազոտությունների համար: Գազանիկների մոտ հատուկ հակամարմինների հայտնաբերումը վկայում է ժանտալստի էպիզոտիայի մասին, ժանտալստի հարուցիչի կամ ժանտալստի հարուցչի ֆրակցիա I հայտնաբերումը՝

գազանիկի հիվանդության մասին, որը ցուցում է նրան սատկացնելու և հետազոտելու համար:

2.14.13. Կարանտինային կենդանակացարանում (վիվարիում) սատկած գազանիկ հայտաբերելու դեպքում կատարվում է դիակի մանրէաբանական (վիրուսաբանական) և շճաբանական հետազոտություն:

2.14.14. Կենդանիների մեջ վարակիչ հիվանդության հայտնաբերման դեպքում կարանտինի ժամկետը երկարացվում է ևս 1 ամսով՝ հաշված վերջին կենդանու սատկելու գրանցման օրից: Չանգվածային անկման դեպքում բոլոր կենդանիներին սատկացնում են, իսկ կենդանակացարանը (վիվարիում)՝ վարակազերծում:

2.14.15. Ընկած կամ սատկացրած կենդանիների դիակները վարակազերծվում են:

2.14.16. Առողջ կենդանիները կարանտինից հետո տեղափոխվում են լաբորատորիա:

2.14.17. Միջատները պահվում են հատուկ սենյակներում (ինսեկտարիաներ)՝ դրանց տարածումը կանխող ապակյա տարրաներում:

2.14.18. Հոդվածոտանիների հետ իրականացվող աշխատանքում օգտագործվող ամանեղենն ախտահանվում է եռացման եղանակով: Մնացորդների վրա լցնում են ախտահանիչ լուծույթ կամ այրում են, գործիքները՝ եռացում են կամ այրում են կրակի վրա:

2.14.19. Կենդանակացարանում (վիվարիում) և ինսեկտարիայում ողնաշարավորների և հողվածոտանիների շարժի հաշվառումը կատարվում է համարակալված և կարված (ժապավինիված) մատյանի մեջ՝ նշելով որսի տեղը և ժամանակը, հետազոտության և կարանտինի արդյունքները:

2.14.20. Կենդանակացարանից (վիվարիում) կամ ինսեկտարիայից ողնաշարավոր կենդանիների և հողվածոտանիների փոխանցումը այլ կազմակերպություններ հնարավոր է կազմակերպության ղեկավարի թույլտվությամբ՝ միայն կարանտինից հետո ծնված կենդանիներից:

## 2.15. ԱԽՏԱԾԻՆ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱԶԴԱԿՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՑԱԾ ՎԹԱՐՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆՆ ՌԻՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

2.15.1. Վթարի դեպքում, երբ արտադրական գոտու օդի և անձնակազմի ախտածին կենսաբանական ազդակներով վարակման իրական կամ պոտենցիալ վտանգ է առաջանում, ստորաբաժանումներում, որտեղ աշխատանքներ են կատարվում ախտածին կենսաբանական ազդակների հետ, պետք է լինի վթարի վերացման ծրագիր և հետազոտվող հարուցիչների նկատմամբ ակտիվ ախտահանող նյութերի պաշար:

Այն ստորաբաժանումներում, որտեղ աշխատանքներ են կատարվում ախտածին կենսաբանական ազդակների հետ, հատուկ առանձնացված տեղում պահվում են հիդրոփահանակ (ավտոմաքս), աշխատանքային (նախատեսված տուժածների զգնատափոխման համար) և պաշտպանական հագուստների (նախատեսված վթարի հետևանքները վերացնող աշխատակիցների համար) լրակազմեր, վթարային դեղարկղիկ: Վթարային դեղարկղիկը պետք է պարունակի.

- 70՝ էթիլ սպիրտ (երկու սրվակ 100մլ),
- կալիում պերմանգանատի երկու կշռուկ 0.05%-անոց լուծույթ պատրաստելու համար (0.0125գ կալիում պերմանգանատ + 25մլ ջուր),
- հատուկ ազդեցության հակաբիոտիկների և քիմիաթերապևտիկ պատրաստուկների հավաքակազմ,
- թորած ջուր,
- ներարկիչ՝ հակաբիոտիկների լուծույթների պատրաստման համար,
- աչքի կաթոցիչներ,
- յոդի 5%-անոց թուրմ,
- կլոր ծայրերով մկրատ,
- վիրակապական միջոցներ (բամբակ, բինտ), լարան և անուշադրի սպիրտ:

Բացի վերոնշյալից վիրուսաբանական լաբորատորիայի դեղարկղիկում պետք է լինեն բորաթթվի 1%-անոց լուծույթ, ինտերֆերոն կամ ինտերֆերոնի ինդուկտոր, սնկաբանական լաբորատորիայի դեղարկղիկում՝ 1%-անոց բորաթթվի լուծույթ կամ լուծույթի պատրաստման համար նախատեսված կշռուկներ (0.25գ բորաթթու + 25մլ ջուր), բոտուլինային տոքսինի հետ աշխատող լաբորատորիայում՝ հոմոլոգիկ բոտուլինային հակատոքսիկ շիճուկներ:

»Մաքուր« գոտում կամ բժշկական մեկուսարանում, կախված հարուցչի տեսակից և աշխատանքի բնույթից, պահվում է շտապ կանխարգելման միջոցների պաշար (դեղարկղիկ), ներառյալ հատուկ ազդեցության հակաբիոտիկների հավաքակազմ, շտապ կանխարգելման քիմիաթերապևտիկ պատրաստուկներ, ինտերֆերոն կամ ինտերֆերոնի ինդուկտորներ, հատուկ իմունազոբուլիններ, հոմոլոգիկ բոտուլինային հակատոքսիկ շիճուկներ:

Պատրաստուկների պահպանման ժամկետները և դեղարկղիկի համալրվածությունը ստուգվում է ստորաբաժանման ղեկավարի կողմից նշանակված պատասխանատու բժշկը կամ մեկուսարանի բժշկը:

2.15.2. Ախտածին կենսաբանական ազդակների հետ աշխատող կազմակերպություններում մշակվում են հնարավոր վթարների (վթարային իրավիճակներ) տարբերակներ և որոշվում է կազմակերպության աշխատակիցների և ղեկավար անձանց այդ պայմաններում գործողությունների կարգը:

Դրա հիման վրա կազմվում է ախտածին կենսաբանական ազդակների հետ կատարվող աշխատանքի ժամանակ առաջացած վթարների վերացմանն ուղղված միջոցառումների ծրագիր, որը համաձայնեցվում է կենսաբանական անվտանգության պահանջների պահպանման հսկողության հանձնախմբի հետ և հաստատվում կազմակերպության ղեկավարի կողմից:

2.15.3. Վթարի վերացման միջոցառումների ծավալը կախված է կատարվող աշխատանքի բնույթից, հարուցչի տեսակից և հատկություններից, վթարի մասշտաբներից.

- վթարներ ախտածին կենսաբանական ազդակների ցայտացրմամբ, այսինքն՝ աերոզոլների առաջացմամբ (հեղուկ կուլտուրաներ պարունակող փորձանոթների և սրվակների ամբողջականության խախտում, կոնդենստով ազարի վրա կուլտուրաներ պարունակող թասերի և փորձանոթների ամբողջականության խախտում, կաթոցիչից կամ ներարկիչից մանրէային կախույթի ցայտացրում, վարակված կենդանիների և հիվանդ մարդկանց դիակների հերձման ժամանակ հյուսվածքային հեղուկի ցայտացրում, ախտածին կուլտուրաների չորացման ժամանակ վակուումային սարքերի վթարներ, ինչպես նաև օդի և շրջապատող առարկաների հպավարակումով (կոնտամինացիա) ուղեկցվող վթարներ, օրինակ՝ ստորաբաժանումների միջև կամ ավտոկլավի սենյակ ախտածին կենսաբանական ազդակների տեղափոխման ժամանակ առաջացած վթարներ),

- վթարներ առանց ախտածին կենսաբանական ազդակների ցայտացրման (բաժակի, փորձանոթի, սրվակի, բյուրեղարար գործիքի ծայրին վարակված նյութ պարունակող օդակներով դիպչելը, կենսաբանական նյութ պարունակող Պետրիի թասերի, փորձանոթների և սրվակների ճաքերը և ցանքսից հետո օդը վառելու ժամանակ կարծր մասնիկի ընկնելը սեղանի վրա և այլն),

- վթարներ մաշկային ծածկույթների ամբողջականության խախտմամբ,

- վթարներ մեկուսացնող կոստյումի կամ պնևմոկոստյումի ամբողջականության խախտմամբ

2.15.4. Աշխատակիցների գործողությունների կարգը վթարների ժամանակ.

2.15.4.1. Ախտածին կենսաբանական ազդակների ցայտացրումով վթարների դեպքում.

- սենյակում գտնվող բոլոր անձիք անմիջապես դադարեցնում են աշխատանքը և, պահելով շնչառությունը, դուրս գալիս վարակված սենյակից նախաբոքս, պինդ փակում են դուռը, միացնում վթարային ազդանշանիչը և կատարվածի մասին հայտնում ստորաբաժանման ղեկավարին,

- ձեռքերը մշակում են ախտահանող լուծույթով կամ սպիրտով, եթե դեմքը պաշտպանված չի եղել, այն մշակում են 70° էթիլ սպիրտով,

- աչքերի, քթի և բերանի յորձաթաղանթները մշակում են վթարային դեղարկիկի պատրաստուկներով, քիթը և կոկորդը ողողում են 70° էթիլ սպիրտով, քթի մեջ կաթեցնում

են կալիումի պերմանգանատի 1:100000 լուծույթ կամ բորաթթվի 1%-անոց լուծույթ, իսկ վիրուսների հետ կապված վթարների դեպքում՝ քթի մեջ կաթնցնում են նաև ինտերֆերոն կամ ինտերֆերոնի ինդուկտոր,

- պաշտպանական հագուստը՝ սկսած գլխաշորից, առատորեն թրջում են ախտահանող լուծույթով, հանում այն և ընկղմում ախտահանող լուծույթի մեջ կամ տեղավորում ավտոկլավի համար նախատեսված բիքսի մեջ,

- մարմնի բաց մասերը մշակում են 70° էթիլ սպիրտով,

- ընդունում են հիգիենիկ ջրացնցուղ

- հագնում են մաքուր աշխատանքային հագուստ

- աչքերի (կարելի է նաև քթի) մեջ կաթնցնում են հակաբիոտիկների և այլ միջոցների լուծույթներ, որոնց նկատմամբ զգայուն է հետազոտվող հարուցիչը,

- մաշկի բաց հատվածների վրա բոտուլինային տոքսինի ընկնելու դեպքում մաշկը լվանում են մեծ քանակությամբ օճառաջրով (լվացման ջրերը ախտահանում են ավտոկլավում),

- բոտուլինային տոքսինի հետ աշխատանքի ժամանակ առաջացած վթարների դեպքում աչքերը և բերանը լվանում են ջրով և 10 ՄՄ/մլ նոսրացված հակատոքսիկ շիճուկով, ներարկում են շիճուկ կամ անատոքսին

- ախտածին կենսաբանական ազդակների այլ տեսակների հետ աշխատանքների ժամանակ առաջացած վթարների դեպքում ներարկվում է իմունոգլոբուլին կամ կատարվում է շտապ քիմկանխարգելում՝ հաշվի առնելով ախտածին կենսաբանական ազդակների տեսակը և պատրաստուկների առկայությունը,

- եթե վթարը տեղի է ունեցել անհայտ հարուցչի հետ աշխատանքի ժամանակ, օգտագործվում են պահեստային հակաբիոտիկների համակցություններ,

Ախտահանիչ միջոցառումների անցկացման կարգը.

- վթարի վերացմանը մասնակցող աշխատակիցները հագնում են I տիպի հակաժանտախտային կոստյում կամ մեկուսացնող կոստյում

- մշակման համար օգտագործվում են համապատասխան վարակիչ ազդակի նկատմամբ արդյունավետ ախտահանիչ լուծույթ

- սենյակի ախտահանումը կատարվում է հիդրոփահանակով (ավտոմաքում) ախտահանիչ լուծույթի ցրցայտման եղանակով՝ սկսած մուտքի դռնից, շարժվելով մշակվող տարածքով և ջրարկելով առջևում գտնվող բոլոր առարկաները (հատակ, պատեր, առաստաղ) և օդը

- առաջնային մշակումից երկու ժամ անց ախտահանիչ լուծույթով թրջված բամբակե խճուճներով հավաքում են կոտրված ամանեղենի կտորները՝ ընկղմելով դրանք ախտահանիչ լուծույթով տարողության մեջ: Վթարի պահին աշխատանքային մակերեսներին գտնվող, ցանքսեր պարունակող լաբորատոր ամանեղենը ընկղմում են

ախտահանող լուծույթով տարողության մեջ կամ վերցնում են ախտահանող լուծույթով թրջված անձեռոցիկով և տեղավորում ավտոկլավի համար նախատեսված տարողության մեջ,

- ախտահանումից հետո սենյակի օդը և մակերեսները վարակազերծվում են մանրէասպան լամպերով,
- արտածծող օդափոխությունն ախտահանման ողջ ընթացքի ժամանակ պետք է միացված լինի,
- ախտահանումը վերջացնելուց հետո աշխատակիցը դուրս է գալիս նախաբոս և հանում պաշտպանական հագուստը՝ ընկղմելով այն ախտահանիչ լուծույթի մեջ,
- երկու ժամ անց սենյակը մաքրվում է, որից հետո կարելի է վերսկսել աշխատանքը:

2.15.4.2. Ախտածին կենսաբանական ազդակների առանց ցայտացրման ուղեկցվող վթարի դեպքում.

- սենյակից դուրս չգալով՝ աշխատակիցները ախտահանիչ լուծույթով թրջված բամբակե խծուծներով ծածկում են ախտածին կենսաբանական ազդակով օբյեկտի մակերեսի ադտոտման վայրը,
- միացնում են վթարային ազդանշանիչը, կանչում ստորաբաժանման ղեկավարին կամ նրան փոխարինող անձին և շարունակում վթարի վայրի ախտահանման աշխատանքները,
- ախտահանումից հետո աշխատակիցը դուրս է գալիս սենյակից, հանում պաշտպանական հագուստը և ընկղմում ախտահանիչ լուծույթի մեջ

2.15.4.3. Մաշկային ծածկույթների ամբողջականության խախտմամբ ուղեկցվող վթարների դեպքում.

- աշխատանքը դադարեցվում է
- միացվում է վթարային ազդանշանիչը
- ձեռքերը մշակում են ախտահանիչ լուծույթով, հանում են ձեռնոցներն ու ախտահանիչ լուծույթի մեջ վերքից դուրս մղում արյունը
- վերքի վրա 4-5 բռպե տևողությամբ դնում են ախտահանիչ լուծույթով կամ 70<sup>0</sup> էթիլ սպիրտով թրջոց
- սիբիրախտի հարուցիչի հետ աշխատանքի դեպքում վերքը խնամքով լվանում են օճառաջրով և վերքի վրա քսում են յոդի 5%-անոց թուրմ՝ առանց ախտահանիչ լուծույթի կիրառման
- I-II խմբերի վիրուսների հետ աշխատանքի դեպքում արյունը դուրս են մղում չոր, մանրէազերծված անձեռոցիկի մեջ և վերքը մշակում են յոդի 5%-անոց թուրմով՝ առանց ախտահանիչ լուծույթի կիրառման

- բոտուլինային տոքսինի հետ աշխատանքի դեպքում վերքը լվանում են ջրով և նոսրացված հակաբոտուլինային շիճուկով (10 ՄՄ/մլ)

2.15.4.4. Մեկուսացնող կոստյումի կամ պնևմոկոստյումի ամբողջականության խախտմամբ ուղեկցվող վթարների դեպքում անհրաժեշտ է.

- վերացնել վնասման պատճառը ձեռքի տակ գտնվող միջոցներով (ախտահանիչ լուծույթով թրջված անձեռոցիկ, կորնցանգ, սպեղանի)

- իրականացնել պնևմոկոստյումի արտաքին մակերեսի ախտահանում և, հնարավորության դեպքում, չանջատվելով օդամատակարարման համակարգից, հետևել դեպի սանթոդարան. այդ դեպքում օդամատակարարման համակարգի օդաբաշխիչ կետերի միջև փոխարկման գործողությունները կատարում է զուգընկերը:

Ձեռնոցների պատռվածքի դեպքում, նրա վրայից հագնում են պահեստային ձեռնոցները, իսկ կոստյումի մակերեսի վարակազերծման ժամանակ հանում են պահեստային և պատռված ձեռնոցները և դրանք ներսից ու դրսից մշակում ախտահանիչ լուծույթով:

»Վարակիչ« գոտում աշխատող պնևմոկոստյումով աշխատակցի գիտակցության կորստի դեպքում նրան օգնություն է ցույց տալիս զուգընկերը: Նա ստուգում է պնևմոկոստյում օդի մուտքի առկայությունը, անհրաժեշտության դեպքում միացնում է օդամատակարարման համակարգի օդաբաշխիչ կետին և միջոցներ է ձեռնարկում տուժածին դուրս բերելու համար:

Ստորաբաժանման ղեկավարը կազմակերպում է սանիտարական տրանսպորտով տուժածի տեղափոխումը հատուկ բժշկական կազմակերպություն, տեղի ունեցածի մասին հայտնում է կազմակերպության ղեկավարին և միջոցներ ձեռնարկում վթարային ջոկատի ուժերով վթարի տեղայնացման և վերացման ուղղությամբ:

2.15.5. »Վթար« ազդանշանի դեպքում ազդանշան ընդունող աշխատակիցը վթարի մասին հայտնում է ստորաբաժանման ղեկավարին կամ նրան փոխարինող մասնագետին: Ստորաբաժանման ղեկավարը վթարի մասին հայտնում է կենսաբանական անվտանգության պահանջների պահպանման հսկողության հանձնախմբին և կազմակերպության ղեկավարին:

2.15.6. Վթարի վայր ժամանած ստորաբաժանման ղեկավարը և կենսաբանական անվտանգության պահանջների պահպանման հսկողության հանձնախմբի ներկայացուցիչը գնահատում են իրավիճակը, որոշում են վթարի հետևանքների տեղայնացման և վերացման միջոցառումների ծավալը և զեկուցում կազմակերպության ղեկավարին, կազմակերպում և հսկողություն սահմանում վթարի վերացմանը մասնակցող աշխատակիցների գործողությունները:

2.15.7. Ստորաբաժանման ղեկավարը և տուժածները գրավոր բացատրագրեր են ներկայացնում կազմակերպության ղեկավարին: Բացատրագրերում պետք է

արտացոլված լինեն վթարի ժամը և տեղը, կատարվող աշխատանքի բնույթը, վթարի հանգամանքները, միկրոօրգանիզմի տեսակը, ախտածնության խումբը, վիրուլենտությունը, զգայունությունը հակաբիոտիկների նկատմամբ, աշխատանքի ժամանակ կենսաբանական անվտանգության պահանջների խախտումների առկայությունը, ձեռնարկված միջոցառումները:

2.15.8. Կենսաբանական անվտանգության պահանջների պահպանման հսկողության հանձնախմբի նախագահը զեկուցագիր է ներկայացնում կազմակերպության ղեկավարին, որտեղ մանրամասն շարադրում է հետևյալ տեղեկությունները. վթարի ամսաթիվը և ժամը, տուժածների անունները և պաշտոնները, վթարի բնույթը, հարուցչի մանրամասն նկարագրությունը, տեղեկություն տուժածների պատվաստման և փորձի ընթացքի մասին, առաջարկներ վթարի հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների ծավալի մասին և գրանցում վթարների և պատահարների մատյանի մեջ:

2.15.9. Զեկուցագրի հիման վրա կազմակերպության ղեկավարը վավերացնում է վթարի հետևանքների վերացմանն ուղղված հետագա գործողությունները՝ վթարների վերացմանն ուղղված միջոցառումների ծրագրին համապատասխան:

2.15.10. Վթարի վերացումից, իսկ անհրաժեշտության դեպքում նաև աշխատակցի կանխարգելիչ բուժումից կամ մեկուսացումից հետո, կենսաբանական անվտանգության պահանջների պահպանման հսկողության հանձնախմբի նախագահը կազմում և համապատասխան մատյանում գրանցում է ընդհանուր եզրակացություն:

2.15.11. Ախտածին կենսաբանական ազդակների հետ աշխատանքների ժամանակ տեղի ունեցած բոլոր դժբախտ պատահարների և սխալների մասին աշխատակիցները տեղյակ են պահում ստորաբաժանման ղեկավարին կամ կենսաբանական անվտանգության պահանջների պահպանման հսկողության հանձնախմբի ներկայացուցչին:

2.15.12. Ստորաբաժանման ղեկավարը կարող է ժամանակավորապես (մինչև կազմակերպության ղեկավարի որոշման ընդունումը) կենսաբանական նյութի հետ աշխատանքից ազատել սույն կարգի պահանջները խախտած անձանց:

2.15.13. Սույն կարգը հաճախակի խախտող անձիք կարող են հեռացվել ախտածին կենսաբանական ազդակների հետ աշխատանքից կազմակերպության ղեկավարի հրամանով:

2.15.14. Ախտածին կենսաբանական ազդակների հետ աշխատանքի ժամանակ տեղի ունեցած վթարների մասին, երբ նշանակվում է կանխարգելիչ բուժում, կազմակերպության ղեկավարը պարտավոր է տեղեկացնել ՀՀ ԱՆ ՊՀՀ տեսչություն:

2.15.15. Ախտածին կենսաբանական ազդակների հետ աշխատող բոլոր ստորաբաժանումներում տարին մեկ անգամ իրականացվում են վթարների վերացման ծրագրային վարժական պարապմունքներ:

3. ԱՆՏԱԾՆՈՒԹՅԱՆ I-II ԽՄԲԵՐԻ ՄԻԿՐՈՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ՀԵՏ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

3.1 Այստաժնության I-II խմբերի միկրոօրգանիզմաների հետ աշխատանքի անվտանգության պահանջների կատարման հսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տնտեսության մարմինները:

3.2 Յուրաքանչյուր կազմակերպությունում, որտեղ աշխատում են այստաժնության I-II խմբերի այստաժին կենսաբանական ազդակների հետ ստեղծվում է կենսաբանական անվտանգության պահանջների պահպանման հսկողության հանձնախումբ, որի աշխատանքի կազմակերպման կանոնակարգը հաստատում է Առողջապահության նախարարը:

3.3 Այստաժնության I - II խմբերի այստաժին կենսաբանական ազդակների հետ աշխատանքի ժամանակ կենսաբանական անվտանգության պահանջների կատարման հարցերի մեթոդական ղեկավարումը և աշխատանքի այդ բաժնի վերաբերյալ գործունեության վերլուծությունը իրականացվում է «Հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից: